

**ՎՃԻՌ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ**

**Երկու հազար տասնինը թվականի հունիսի քսանչորսին**

**քաղաք Երևան**

Հանրային բնապահպանական դատարանը՝ Նազելի Վարդանյան, Կարինե Դանիելյան, Զարուհի Հովհաննիսյան, Ինգա Զարաֆյան կազմով  
**Քարտուղարությամբ՝** Վիկտորյա Բուռնազյանի  
**Մասնակցությամբ՝** ԷկոԼուրի փորձագետ Ռոզա Զուլհալյանի,  
**Դիմումատու՝** Թեհմինե Ենոքյան  
**Պատասխանողի ներկայացուցիչ/ներ՝** պատշաճ ծանուցվել են, սակայն ներկայացել էին միայն ՀՀ առողջապահության նախարարության, Լոռու և Կոտայքի մարզպետարանների ներկայացուցիչները: Դատարանը, դռնբաց դատական նիստում քննելով «Հայաստանում զարգացող մետաղական հանքարդյունաբերության ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա» հանրային բնապահպանական գործն՝ ըստ Թեհմինե Ենոքյանի դիմումի,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Հայաստանում 90-ական թվականներից ի վեր բուռն զարգացում է ունեցել հանքարդյունաբերությունը: Ընդերքօգտագործման թույլտվությունները տրվել են՝ առանց հաշվի առնելու մարդու առողջության և բնական շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը: Բնապահպանական փորձաքննություն, ըստ էության, չի կատարվում, այլ գնահատվում է ձեռնարկողի կողմից ներկայացված՝ հաճախ թերի, սխալ տեղեկատվություն պարունակող ՇՄԱԳ-ը, արդյունքում խախտվում են ՀՀ օրենսդրությունը և միջազգային նորմերը: Հանքավայրերի շահագործումը կրում է էքստենսիվ բնույթ: Չի իրականացվում պատշաճ հսկողություն և վերահսկողություն, իսկ 2015-2018թթ. ՀՀ կառավարության՝ ստուգումներ անցկացնելու արգելքը ավելի է խորացրել առկա խնդիրները: Այս ամենի արդյունքում անդառնալի վնաս է պատճառվել մարդու առողջությանը, բնական շրջակա միջավայրին, յուրացվել են երկրի բնական պաշարները, ոտնահարելով ազգային և պետական շահերը, խախտվել են մարդու իրավունքները, Հայաստանի հանքարդյունաբերական կապիտալը արտահոսել է օֆշոր գոտիներ, մեր ժողովրդին թողնելով չռեկուլտիվացված պոչամբարներ, աղտոտված օդ, օգտագործման համար ոչ պիտանի հող և 5-րդ կարգի աղտոտվածությամբ գետեր, արդյունքում ավելացել են մարդկանց հիվանդացության և մահացության դեպքերը, անդառնալի ոչնչացվել են լանդշաֆտները և կենսաբազմազանությունը:

Սակայն, ՀՀ կառավարությունը դանդաղում է հանքարդյունաբերության ոլորտի բարելավման, այն արդյունավետ դարձնելուն և շրջակա միջավայրի վրա

ազդեցությունը նվազագույնի հասցնելուն ուղղված որոշումների ընդունման հարցում: Արդյունքում, արդարացիորեն աճում է հանրության դժգոհությունը և, չունենալով պայքարի արդյունավետ գործիքակազմ, կրկին դիմում են փողոցային պայքարի:

## **2. Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը**

Դիմումատու՝ Թ.Ենոքյանը, դիմելով Դատարան ներկայացրել է հետևյալ փաստերը և հիմնավորումները.

ՀՀ Անկախության հռչակագրի 7-րդ հոդվածի համաձայն. «7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է»:

Պաշտոնական տվյալներով տրված է 417 հանքավայրի արդյունահանման իրավունք, որոնցից 27-ը մետաղական են: 45 հանքավայր էլ գտնվում է ուսումնասիրման փուլում, որոնցից 24-ը կրկին մետաղական են: Հայաստանի կառավարությունը տվել է նաև Հայաստանի 7 մարզերի տարածքում նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար 3 արտոնագիր: Այս ամենի արդյունքում արդեն իսկ ունենք մոտ 1 միլիարդ տոննա պոչանքներով լցված 23 գործող և կոնսերվացված պոչամբար, որոնց մակերեսը կազմում է 1500 հա: Պոչամբարի և բաց հանքերի կողմից շրջակա միջավայրի աղտոտումը 1-ը 10-ի հարաբերակցությամբ է, հետևաբար, պոչամբարներն արդեն իսկ աղտոտել են 15000 հա տարածք: Հանքավայրերի տարածքը շուրջ 8000 հա է, հետևաբար, մենք արդեն իսկ ունենք 80 000 հազար հա աղտոտված տարածք բաց հանքերի պատճառով:

1.Ներկայումս շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սահմանված չափորոշիչները կատարյալ չեն:

2.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը թերի է, Բնապահպանության նախարարությունը (ներկայումս Շրջակա միջավայրի նախարարություն) հանքարդյունաբերական նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության պատշաճ փորձաքննություն չի իրականացնում, պատշաճ չի գնահատվում շրջակա միջավայրի տարբեր տարրերի՝ օդի, ջրի, հողի, լանդշաֆտի, ԲՀՊՏ-ների, կենսաբազմազանության, մարդու առողջության, սոցիալական վիճակի վրա նախագծի ազդեցությունը, հետևաբար, կյանքի են կոչվում շրջակա միջավայրի և առողջության համար խիստ վտանգավոր ծրագրեր:

3. Պոչամբարները երկար տարիներ համարվել են տեխնաժին հանքավայրեր և ազատվել են վտանգավոր թափոնների տեղադրման համար սահմանված բնապահպանական վճարներից: Այսպիսով, ՀՀ կառավարությունը թույլ է տվել պետության տարածքում մասնավոր ընկերությունների կողմից տեղադրելու բարձր վտանգավորության դասի թափոններ առանց դրանց դիմաց վճարման և դրանց հետագա կառավարման կամ չեզոքացման խնդիրները լուծելու: Առ այսօր էլ այդ խնդիրներն առկախված են օդում: Ավելին, այսօր էլ բաց երկնքի տակ կան լքված պոչամբարներ և հանքեր, որոնք ամեն ժամ աղտոտում են շրջակա միջավայրը: Այդ պոչամբարներից են Թուխմանուկի ոսկու հանքավայրի չգործող պոչամբարները, որն ընդերքօգտագործողը չի ռեկուլտիվացրել

հետագայում դրանց պարունակությունը վերամշակելու նպատակով: Դաստակերտի պոչամբարից թունավոր ջրերն արտահոսում են շրջակա միջավայր: Լքված հանքերից, օրինակ, Կավարտի հանքավայրը, որից արտահոսած թթվային ջրերը վերջերս ողողել էին Կապան քաղաքը: Կառավարությունը չի սահմանել հստակ խաղի կանոններ ընդերքօգտագործողների համար և հիմա ինքն էլ գումար չունի չեզոքացնելու հանքարդյունաբերության պատճառով աղտոտման հետևանքները: Հատկապես բարձր վտանգավորություն են ներկայացնում ապարաթթվային դրենաժները, որոնց ազդեցությունը երկարաժամկետ է և տևում է հարյուրավոր տարիներ:

Նշեմ, որ փորձագետների պնդմամբ Թեղուտի պոչամբարից ևս արտահոսում է թթվային դրենաժ, որի ապացույցը Շնող գետի գետաբերանում թթվային միջավայրն է:

4. Բարձր սեյսմիկ գոտի հանդիսացող Հայաստանում պոչամբարները, որպես հիդրոտեխնիկական կառույցներ, չեն համապատասխանում տեխնիկական անվտանգության չափորոշիչներին: Այդպիսի պոչամբարներից են Թեղուտի, Նահատակի, Գեղանուշի պոչամբարները:

Նշեմ, որ Գեղանուշի, Նահատակի, ինչպես նաև Արարատի պոչամբարները նախկին դասակարգմամբ ունեն առաջին դասի վտանգավորություն:

Արարատի պոչամբարի խորքում գտնվում է արտեզյան ջրերի հզոր ավազան: Պոչամբարը չունի մեկուսիչ շերտ, մետաղները ներթափանցում են հողի շերտերի մեջ և տարածվում շրջակա միջավայրում՝ աղտոտելով այն:

Բացի տեխնիկական անվտանգությունից, շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն են թողնում նաև տեխնոլոգիական վթարները: Օրինակ, 2015-2016թթ. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչատարը վթարվել է մի քանի անգամ, ինչի պատճառով պոչերը ողողել են Սյունիք համայնքը, Աճանան գետը, և հարակից այգիները:

Հաճախակի վթարվում է նաև «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի պոչատարը:

5. ՀՀ նախկին կառավարության օրոք, մետաղական հանքարդյունաբերական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացում կառավարությունը իրավական կարգավորումներ չի ստեղծել պոչամբարները մասնավորին փոխանցելու գործընթացի ժամանակ, ինչը հանգեցրել է պոչամբարների հետագա չեզոքացման համար պատասխանատուների անորոշության:

6. ա) Հանքարդյունաբերության արդյունքում առաջացող օդի, ջրի և հողի աղտոտման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական լիազոր մարմինը՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը (ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական տեսչություն) ապահովված չէ շարժական քիմիական լաբորատորիաներով, ինչպես նաև ժամանակակից գիտատեխնիկական հագեցվածությամբ լաբորատորիաներով: Այս հանգամանքը նույնպես իր ազդեցությունն է թողնում ինչպես աղտոտմանն արագ արձագանքման, այնպես էլ շրջակա միջավայրին վնասների հաշվարկի հիմք հանդիսացող աղտոտիչների չափաքանակների որոշման համար:

բ) Չհիմնավորված կերպով նախկինում լիկվիդացվել է Մասնագիտական և պրոֆ. հիվանդությունների ինստիտուտը, որը ստեղծվել էր 1950-ական թվականներին:

Ոչնչացված է նաև ինստիտուտի ողջ արխիվը, որը կարող էր հանդիսանալ առողջապահական լաբորատոր գիտահետազոտական ապացուցողական բազա:

**Մետաղական հանքարդյունաբերության ազդեցությունը**

- Շնորհ գետը 5-րդ դասի աղտոտվածություն ունի: Պատճառը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պոչամբարի տարածքից դուրս եկող թափոնաջրերն են, որոնք լցվում են գետը: Թեղուտ» ՓԲԸ-ն չէր հերքել իր մեղավորությունը և դեռ անցյալ տարի խոստացել էր շտկել իրավիճակը, սակայն Շնորհ գետի աղտոտվածությունը չի նվազել:
- Արմանիսի ոսկու հանքավայրը չի շահագործվում արդեն մի քանի տարի, իսկ ճանապարհի կողքին գտնվող լցակույտերն առաջացնում են թթվային ջրեր, որոնք տարածվում են Ստեփանավանի ուղղությամբ:
- Ախթալա գետի գետաբերանում ջրի աղտոտվածությունը հասնում է 5-րդ դասի: Ախթալա գետ են լցվում Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի ստորգետնյա հանքից դուրս եկող թունավորված ջրերը:
- Գեղարքունիք Մասրիկ եւ Սոտք գետերի հատակի նստվածքը պարունակում է ծանր մետաղների մի ամբողջ փունջ, որի պրոֆիլն ամբողջովին արտացոլում է Սոտքի ոսկու հանքավայրում այդ մետաղների պարունակությունը:
- Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արդյունաբերական կեղտաջրերը Կարճևան գետի հունով պարբերաբար հոսում, լցվում են կարճևանցիների այգիները, թունավորում հողը՝ դարձնելով անպիտան, իսկ բերքը՝ վնասակար առողջության համար: Բնակիչները բողոքում են պայթեցումների հետևանքով առաջացած տների պատերի ճաքերից և փոշու առկայությունից:
- Սյունիք գյուղը Կապան և Քաջարան խոշոր համայնքների գյուղմթերքի հիմնական մատակարարն է: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի 2007-2008թթ. ուսումնասիրությունների համաձայն, Սյունիք գյուղում աճած բույսերը համարվել են չափազանց վտանգավոր օգտագործման համար:
- Ողջի գետն աղտոտվում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) և Կապանի լեռնահարստացման կոմբինատի ենթակառուցվածքների կողմից: Գետի տարբեր հատվածներում ազդեցությունը տարբեր է: Նորաշենիկ գետը ևս կրում է ԶՊՄԿ-ի և Կապանի լեռնահարստացման կոմբինատի ենթակառուցվածքների ազդեցությունը:

Ընդհանուր առմամբ հանքարդյունաբերության հետևանքով Սյունիքի մարզի 12 գետ ու վտակ ունեն ամենավատ՝ 5-րդ դասի աղտոտվածություն: Այդ գետերն են՝ Որոտանի գետավազանի Սիսիան գետի Կիշկոշտ և Այրիգետ վտակները, Ողջիի գետավազանում՝ Ողջի գետն ու Գեղի, Արծվանիկ, Նորաշենիկ, Կավարտ, Գեղանուշ վտակները, Մեղրիգետի գետավազանում՝ Մեղրիգետ, Կարճևան գետերը և դրանց, համապատասխանաբար, Խաչիձոր ու Ագարակ վտակները: Այս մասին նշված է «Հարավային ջրավազանային տարածքի կառավարման 2016-2021թթ. միջոցառումների պլանում»:

7. Հայաստանում հանքավայրերի փակման ծրագրերն ընդհանրական են և չեն ներառում կոնսերվացման, վերականգնման և պահպանման այն բոլոր չափանիշերը, որոնք կնպաստեն շրջակա էկոհամակարգի կայունացմանը: Չնայած գոյություն ունեցող ուղեցույցերին, դրանք հիմնականում չեն կիրառվում, քանի որ պարտադիր բնույթ չեն կրում:

8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ժամանակ հանքավայրերի նախագծերի անդրսահմանային ազդեցության գնահատում չի կատարվում:

9. Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի հարկային օրենսդրությունն առանձնապես չի տարբերվում տնտեսության այլ ճյուղերի օրենսդրությունից: Այնուամենայնիվ, հանքարդյունաբերական ընկերությունները հնարավորություն ունեն 20%-ով շեղվել Լոնդոնի Մետաղների բորսայի գներից, ինչը հանգեցնում է հանքարդյունաբերությունից ստացվող պետական եկամուտների նվազման:

10. Հանքարդյունաբերական ընկերությունները չեն օգտագործում մետաղի արդյունահանման ամենաառաջադեմ մեթոդները, որպեսզի ռոյալթիից եկամուտը սահմանափակվի օգտագործված տեխնոլոգիայով:

11. Հայաստանում գործող օրենսդրությամբ սահմանված հանքերի ռեկուլտիվացման գումարները բավարար չեն այդ նպատակներին ծառայելու համար:

Բնական միջավայրի վրա թողած վնասներից ամենաշատը տուժում են բնակչության առավել խոցելի ու աղքատ խավերը, ծանր մետաղներով աղտոտված հողերի բերքատվությունն անկում է ապրում, գյուղմթերքի վարկանիշն ընկնում է և այն չի իրացվում շուկայում:

Մինչ օրս ՀՀ կառավարությունը չի ընդունել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի ռազմավարությունը:

Էկոլոգիական հավասարակշռության խաթարման և էկոլոգիական անվտանգության խախտման վառ օրինակներից է հարյուրավոր տարիների ընթացքում ձևավորված անտառային էկոհամակարգերի ոչնչացումը Թեղուտում:

Մետաղական հանքերի ուսումնասիրման և շահագործման թույլտվություններ են տրվել կարևորագույն ջրագոյացման գոտիներում՝ օրինակ, Մեղրի գետի ակունքներում (Լիճքի պղնձի հանք) և Ամուլսարում: Մակերևութային և ստորերկրյա ջրերն աղտոտվում են պոչամբարներից բաց թողնվող թափոնաջրերից, ինչպես նաև դեպի բնական միջավայր այլ տիպի արտահոսքերից: Այդ ջրերն էլ հետագայում հաճախ խառնվում են ռոտզման նպատակներով օգտագործվող ջրերին: Այս ամենի հետևանքով ծանր մետաղները անցնում են գյուղմթերքի մեջ և սննդային շղթայով հասնում մարդկանց օրգանիզմ՝ դառնալով տարբեր հիվանդությունների առաջացման պատճառ: Հայաստանի բոլոր լեռնահանքային շրջաններում արված գիտական հետազոտությունները միանշանակ հաստատում են այս փաստերը, սակայն այդ հետազոտական արդյունքներն ահազանգ չեն հանդիսացել ՀՀ առողջապահության նախարարության համար, որպեսզի պետական մակարդակով անցկացվի համակարգային հետազոտություն (սկրինինգ) հանքարդյունաբերական տարածքներում ապրող բնակիչների հիվանդացությունների վերհանման վերաբերյալ՝ պատճառահետևանքային կապը բացահայտելու ուղղությամբ, ինչը ենթադրում է հանցավոր անգործություն:

Իհարկե, շատ հրապուրիչ է շահագործել Հայաստանի մետաղական օգտակար հանածոները, քանզի մեր պետությունը կառավարողները ժողովրդին պատկանող հարստության օգտագործման իրավունքը ոչ միայն 100%-ով տրամադրել են հիմնականում օֆշորային գոտիներում գրանցված օտարերկրյա ընկերություններին, այլ նաև ստեղծել են այնպիսի օրենսդրական և հարկային դաշտ, որ ընդերքօգտագործողները հայտնվել են խիստ շահեկան վիճակում: Նույնիսկ հանքարդյունաբերական թունավոր թափոններն են ավելի արտոնյալ, քան քաղաքացու առաջացրած կենցաղային թափոնը: 1 տոննա կենցաղային թափոնի տեղադրման համար սահմանված է 600 դրամ, մինչդեռ հարկային օրենսգրքով պոչամբար հանքարդյունաբերական 1 տոննա վտանգավոր թափոն տեղադրման համար սահմանվել է 30-240 դրամ: Իսկ ահա միլիոնավոր տոննաներով թունավոր թափոնները, որոնք չեն ուղղվում պոչամբարներ, Կառավարության, տեղական ու միջազգային հանքարդյունահանող լոբբիի շնորհիվ ստացել են «լցակույտ» անվանումն ու հանվել թափոնների դասակարգումից: Այս ամենի հետևանքով ընդերքօգտագործումից առաջացած եկամուտների աղյուծի բաժինը մնում է մասնավոր ընկերություններին, ինչպես նաև դրանց ետևում թաքնված Հայաստանի նախկին և ներկա բարձրաստիճան պաշտոնյաներին:

Ներկայացնեմ նաև մի քանի սոցիալ-տնտեսական ցուցանիշներ: Համաձայն Ազգային վիճակագրության ծառայության 2007-2016թթ. միջինացված տվյալների՝ հանքարդյունաբերության ոլորտում աշխատել է մոտ 10 000 մարդ, ինչը կազմել է երկրի բնակչության զբաղվածության ընդամենը 0,9 տոկոսը, իսկ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ այդ ոլորտի մասնաբաժինը վերջին 16 տարում կազմել է մոտ 2,8 տոկոս: Այստեղ շատ կարևոր է արձանագրել նաև այն փաստը, որ այս ոլորտում ստացվող արդյունքի մոտ 95%-ը ապահովվում է 5-6 խոշոր և արդեն մի քանի տասնամյակ շահագործվող հանքավայրերի շնորհիվ:

Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ստեղծված իրավիճակի համար պատասխանատու են ոլորտում պետական քաղաքականություն մշակող, թույլտվություններ և լիցենզիաներ տրամադրող, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանվող սահմանափակումների, չափաքանակների, նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող հետևյալ պետական մարմինները՝ ՀՀ կառավարությունը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության, ՀՀ առողջապահության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունները, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչությունը, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի պետական տեսչությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, ստացած թույլտվությունների, լիցենզիաների, պայմանագրային պարտավորությունների պահանջների, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ռեսուրսների օգտագործման և բնապահպանական սահմանափակումների, չափաքանակների ու նորմերի չպահպանման, սոցիալական պատասխանատվություն չկրելու համար: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում ստեղծված

իրավիճակի համար պատասխանատու են նաև մետաղական հանքավավայրեր շահագործող ընկերությունները:

Դիմելով Բնապահպանական հանրային դատարան՝ խնդրում եմ անաչառ և բազմակողմանի քննություն իրականացրել դիմումում ներկայացված փաստերով և առաջարկում եմ հանքարդյունաբերության ոլորտում տիրող իրավիճակը գնահատել որպես էկոլոգիական հանցագործություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի նկատմամբ:

### **3. Պատասխանողների ներկայացուցչի փաստարկները և իրավական դիրքորոշումը**

- **Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Առողջապահության նախարարության անունից ուզում եմ ասել, որ նախարարությունը կարևորում է բարձրացված խնդիրը: Կարևորում է այնքանով, որ այսօր որպես առաջնահերթություն դիտարկում է այս խնդիրը: Բայց թույլ տվեք չհամաձայնել սկզբնաաղբյուր ներկայացված նյութի հետ, ես չկարողացա այստեղ հասկանալ ընդհանուր ինչի մասին ենք մենք խոսում: Բոլորս գիտենք, որ կա խնդիր, բոլորս գիտենք, որ հանքարդյունաբերությունը կարող է բերել մարդու առողջության վրա բացասական ազդեցության: Բայց ես չտեսա որևէ ռիսկերի տեսանկյունից վերլուծական, վերլուծություն ըստ պետական կառավարման մարմնի:

Ինչ վերաբերում է Առողջապահության տեսչությանը, Առողջապահության նախարարությունն իր կազմում առողջապահական պետական տեսչություն չունի, առողջապահական և սոցիալական աշխատանքի տեսչությունը գտնվում է Կառավարությանն առընթեր և ներկայացնում է իրենից առանձին պետական կառավարման մարմին: Ինչ վերաբերում է վերլուծություններին, պետական կառավարման մարմինների լիազորություններին և ծրագրերին, յուրաքանչյուր պետական մարմին ունի ծրագիր, որով աշխատում է, այդ թվում առողջապահության նախարարությունը, և ինչպես այստեղ նշվեց ծխելու հետ կապված, պետք է նշեմ, որ առողջապահության նախարարությունն ունի ոչ վարակիչ հիվանդությունների դեմ ծրագիր, որտեղ որպես առանձին ծրագիր շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա ազդեցության միջոցառումը ներառված է, և արդեն շուրջ 4 տարի աշխատանքներ են իրականացվում: Նախարարությունն արդեն իսկ մշակել է մեթոդաբանություն, որը թույլ կտա բազմակողմանի վերլուծությունների միջոցով, հաշվի առնելով բոլոր ռիսկերը՝ այդ թվում վարքագծային ռիսկի գործոնները, բացահայտել պատճառահետևանքային կապերը, քանի որ դրանք, այո, շատ կարևոր են, և մենք եթե դրանք ճիշտ չբացահայտենք, մենք չենք կարող ճիշտ աշխատանքներ իրականացնել դրանց կանխարգելման ուղղությամբ:

Ներկայում մեթոդաբանությունը գտնվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում, փորձագետների քննություն է արված, և քննությունից հետո նախատեսվում է նրանց կարծիքների հիման վրա լրամշակել: Միայն այդ ժամանակ մենք կարող ենք և անհատական և պոպուլյացիոն ռիսկերը գնահատել և կարող ենք գնահատել, թե հանքարդյունաբերության արդյունքում ինչքան լրացուցիչ չարորակ նորագոյացությունների դեպքեր կարող ենք ունենալ և ինչ միջոցառումներ կարող ենք ձեռնարկել:

Անցնենք ապացուցողական բժշկությանը: Մենք անընդհատ ասում ենք գիտական հետազոտություններ: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը երկար տարիների գիտական հետազոտությունների արդյունքում ապացուցել է, որ նոր ոչ վարակիչ հիվանդությունների 50-ից ավելի տոկոսը կապված է վարքագծային գործոնների հետ: Եվ մենք, այո, այստեղ շատ կարևորում ենք, որպեսզի մենք կարողանանք հասկանալ հանքարդյունաբերության ոլորտում ինչ նշանակություն ունեն վարքագծային ռիսկի գործոնները և ինչ նշանակություն ունեն մնացած այլ գործոնները ճիշտ միջոցառումներ կազմակերպելու համար:

Որպես համաճարակաբան նշում եմ, որ հիվանդացության զարգացման համար շատ գործոններ կան: Ի տարբերություն վարակիչ հիվանդությունների, ոչ վարակիչ հիվանդությունների ազդեցությունը շատ մեծ է, ինչը դժվարացնում է պատճառահետևանքային կապերը բացահայտել: Որպեսզի մարդը հանքարդյունաբերության ազդեցության ենթարկվի, պետք են բավական երկար տարիներ, որպեսզի զարգանա, օրինակ, չարորակ նորագոյացություն: Հիմա հարց արդյո՞ք հաշվի առնվել է բնակչության այն զանգվածը, որն արդեն 10 տարի և ավելի այնտեղ բնակվում է, նաև միգրացիան է ավելացել, բնակչության վայրերը փոխում են: Դա մի գործոն, որը պետք է հաշվի առնել: Արդյո՞ք հաշվի է առնվել, անձն այնտեղ աշխատում է հանքարդյունաբերությունում, թե գտնվում է հանքարդյունաբերության տարածքում: Արդյո՞ք հաշվի են առնվել վարքագծային ռիսկի գործոնները, որը որևէ մեկը չի կարող հերքել: Հարգելի կոլեգաներ, դա Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներն են, դա մեր տվյալները չեն: Այդ բոլոր հանգամանքները հաշվի առնելով նոր պետք է հնարավորություն ստանալ այդ պատճառահետևանքային կապերը բացահայտել: Նախարարությունը պատրաստակամ կանգանած է, թե բնակչության, թե կառույցների կողքին:

### **Նազելի Վարդանյան.**

- Հարգելի տիկին Աբովյան, Դուք շատ լավ նշեցիք, որ պետք է տեսնել, ուսումնասիրել բոլոր հանգամանքները: Ո՞վ պետք է դա անի: Դա դուք պետք է անեք, տարիներ շարունակ պետք է արվեր, դա մեկ օրվա գործ չէ: Տասնամյակներ շարունակ, որպես հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, մարդիկ խոսել են այդ մասին, բազմաթիվ տեղերում բարձրաձայնվել է դա, Դուք մի ընդունեք դա անձնավորված, երբ մենք խոսում ենք ինչ-որ մի կառույցի մասին, մենք խոսում ենք ընդհանրական: Տասնամյակներ շարունակ այդ հարցը բարձացվել է և միջազգային



կազմակերպությունների կողմից, և՛ ՀԿ-ների ուսումնասիրությունների և՛ սոց. հարցումների արդյունքում: Արդյո՞ք ձեզ մոտ կա այդ բազան:

**Ռումելյա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

Առողջապահության նախարարությունն ամենավերջին կառույցն է, երբ խախտվում են բոլոր նորմերը, կանոնները, հանքը շահագործվում է, շրջակա միջավայրը, օդը աղտոտվում է, նոր հասնում է Առողջապահության նախարարությանը...: Հավատացած եղեք, մենք ունենք բոլոր տվյալները, մենք տարիներ շարունակ հիվանդացության վերլուծություններ ենք անում, մենք այնքան մտահոգված ենք, որ եթե կարող ենք այսօր սովորական մեթոդական ուղեցույցներ հաստատել նախարարի հրամանով, այս մեթոդականը, որը մշակվել է մեկ տարի և դեռ լրամշակման փուլում է, մենք ուղարկել ենք միջազգային ասոյաններ, որ այնտեղից ստանանք կարծիք:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

- Հանքարդյունաբերական ո՞ր տարածքներում կա ազդեցություն մարդու առողջության վրա:

**Ռումելյա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Մենք թիվ չենք կարող ասել, քանի որ նման մեթոդաբանություն դեռևս չկա: Մեթոդաբանությունը մշակվել և միջազգային կառույցներում է: Երբ կլինի պատրաստ մենք բոլորիդ հետ միասին աշխատելու ենք: Առողջապահության նախարարությունը միայն գիտական մեթոդաբանության վրա կարող է տալ եզրակացություն:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

-Տեղյա՞կ էք, որ գոյություն ունի «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենք, և 23-րդ հոդվածով նախատեսված է, որ պետք է հանքերի, այն ծրագրերի դեպքում, որը ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա, պարտադիր իրականացվի սանիտարահիգիենիկ փորձաքննություն: Քանի՞ այդպիսի փորձաքննություն է իրականացրել Առողջապահության նախարարությունը:

**Ռումելյա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Ես պատրաստված չեմ եղել, որ այսպիսի հարցեր էք տալու: Ինֆորմացիային չեմ տիրապետում: Կա համապատասխան բաժին, որտեղ այդ փորձաքննությունները արվում են:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

- Ես Ձեզ տեղեկացնեմ, որ երբևէ այդպիսի փորձաքննություն չի արվել: Երբ Դուք ասում եք, որ օդը աղտոտելուց հետո պետք է արվի նման փորձաքննություն: Ոչ: Համաձայն այդ օրենքի, հենց սկզբից պետք է լիներ, առաջին քարը դնում է Առողջապահության նախարարությունը: Բայց մինչ օրս Առողջապահության նախարարությունը սանիտարահիգիենիկ փորձաքննություն չի արել, իսկ բնապահպանական փորձաքննության ընթացքում տվել է միայն մեկ թղթի վրա կարծիք, որ առարկություններ չունի: Դուք մինչև հանքը բացելը պետք է կանխեք: Եթե դուք տալիս եք բացասական եզրակացություն, հանքը չի բացվում:

**Ռուբեն Գրիգորյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի շրջակա միջավայրի հիգիենայի բաժնի պետ.**

- Ցանկացած նախագիծ երբ մեզ ուղարկում է Բնապահպանության նախարարությունը, այն մանրամասն փորձաքննություն է անցնում:

**Դիմումատու Թեհմինե Ենոքյան.**

- Որպես կանոն, հանրային լուսմներին Առողջապահության նախարարության ներկայացուցիչ չի եղել երբևէ: Ես խնդրում՝ եմ այս պահից սկսած, եթե որևէ տեղ կլինի հանրային լուսմ հանքարդյունաբերության որևէ նախագծի, ծրագրի վերաբերյալ, Առողջապահության նախարարության կողմից լինի նախաձեռնողականություն:

**Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

-Միայն այս տարի ամենաքիչը 4 քննարկում տեղի է ունեցել: Նախարարությունը կարևորում է այս խնդիրը, այս խնդիրը շատ կարևոր է բնակչության առողջության տեսանկյունից: Մենք էլ աշխատանքներ ենք իրականացնում:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

-Հանրային լուսմներին մասնակցե՞լ եք:

**Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

-Լուսմներին հրավիրվե՞լ է նախարարությունը:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

-Դրանք հանրային լուսմներ են, հրապարակվում են: Եթե սովորական հովիվը կարող է գալ մասնակցել, առավել ևս Առողջապահության նախարարությունը պետք է ներկա լինի:

**Լևոն Գալստյան՝ «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն.**

- Հարցում էր արվել Առողջապահության նախարարությանը 2012թ., մեկ անգամ էլ՝ 2014թ-ին: Հարցումը հստակ էր՝ տրամադրել հանքարդյունաբերության հարակից տարածքի բնակչության առողջապահական տվյալները: Այդ տվյալներն այդպես էլ չտրամադրվեցին ոչ 2012թ., ոչ 2014 թ.: Հիմա կարո՞ղ ենք մենք, ի վերջո, տեսնել այդ տվյալները, առանձին, օրինակ, Ալավերդի համայնքում ո՞ր տեսակի հիվանդությամբ քանի հիվանդ կա:

**Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Բազմիցս նման հարցումներ ստացել ենք, բազմիցս պաշտոնապես պատասխանել ենք, մանրամասն:

**Լևոն Գալստյան՝ «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն.**

- Պատասխանը հետևյալն է եղել: Եթե ուզում եք այդ տվյալները իմանալ, դիմեք այս ինչ ինստիտուտի այս ինչ բաժինը: Ես որպես ՀՀ քաղաքացի ուզում եմ իմանալ՝ կա՞րողո՞ք բաց տվյալ, որտե՞ղ ես կարող եմ տեսնել Ագարակ, Կապան, Քաջարան, Ախթալա, Ալավերդի, Սոթք, Արարատ համայնքների հիվանդացության տվյալները, ինչպես կա Սյունիքի մարզի համար, օրինակ:

**Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Պետական վիճակագրական տվյալները հավաքագրում է Առողջապահության ազգային ինստիտուտը: Մտեք Առողջապահության ազգային ինստիտուտի կայքէջը, բացեք քարտեզագրում: Յուրաքանչյուր մարզի համար կա քարտեզ: մարզի համայնքների հիվանդացությունը և մահացությունը, քանի բժիշկ կա, ինչ ուզում եք:

**Դատավոր Կարինե Դանիելյան.**

- Մշակվել է հատուկ գործիքակազմ, և անընդհատ ասվում է, որ այս շաբաթ գալու են Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից, մյուս շաբաթ են գալու և այդ գործիքակազմին գնահատական կտրվի: Հիմա գալու է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից ներկայացուցիչ, թե՛ չէ:

**Ռոմելլա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Այո, գալու է համապատասխան փորձագետ, որ տեղում մենք աշխատենք: Գործիքակազմը գրեթե պատրաստ է, ուղղակի մենք ուզում ենք իրենց վերդիկտը,

որովհետև դա միջազգային գործիքակազմ է, սովորական կորեկիացիա չես անում: Դա լուրջ մաթեմատիկական հաշվարկներ են:

**Բնապահպան-իրավաբան Արթուր Գրիգորյան.**

- Պարզ է, որ չեն ներկայացվում փաստաթղթեր Առողջապահության նախարարություն, որովհետև օրենքի մեխանիզմն այդպիսին է, որ ներկայացնում են տարբեր մարմինների՝ կարծիք իմանալու, ոչ թե փորձաքննություն իրականացնելու համար: Ըստ այդ մեթոդաբանության, որը պետք է ընդունվի, ենթադրվում է նաև, որ պետք է օրենսդրական փոփոխություններ կամ հստակեցումներ արվեն և Առողջապահության նախարարությունը դառնա մի մարմին, որը պետք է իրականացնի փորձաքննություն նույն մակարդակով, ինչպես օրինակ Բնապահպանության նախարարությունը: Եվ այդ մեթոդաբանությունը թույլ տալիս է արդյոք, որ նախագծային մակարդակում Առողջապահության նախարարությունը կարողանա հստակ գնահատական տալ, թե տվյալ գործունեությունն արդյոք որքանով է ընդունելի շրջակա միջավայրի ազդեցությունը մարդու առողջության վրա համատեքստում:

**Ռոմելյա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Օրենսդրական մակարդակում որևէ բան չկա, որովհետև, նորից եմ ասում, դա կոնկրետ գործիքակազմ է: Երբ մենք կունենանք որոշակի տվյալներ և միջազգային դասկարգիչով հստակ գիտենք, որ մետաղը ինչ հիվանդության կարող է բերել. մենք կարող ենք այդ գործիքակազմով հստակ որոշել՝ պատճառահետևանքային կապ կա, կարող ենք անհատական և պուպոլյացիոն ռիսկ որոշել: Այն իրենից ենթադրելու է իրավական ակտ: Բայց այդ իրավական ակտը գործիք է:

**Բնապահպան-իրավաբան Արթուր Գրիգորյան.**

-Կարելի է ասել, որ հնարավորություն կընձեռվի պատճառահետևանքային կապերը պարզել և փոխհատուցման հարց բարձրացնել:

**Ռոմելյա Աբովյան՝ ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի ոչ վարակիչ հիվանդությունների և ներհիվանդանոցային վարակների համաճարակաբանության բաժնի պետ.**

- Եթե պատճառահետևանքային կապը ապացուցվեց, իհարկե, թույլ կտա: Ուղղակի այդ գործիքը պետք է հաստատվի միջազգային մակարդակում:

**Դատավոր Նազելի Վարդանյան.**

- Իրավական նորմը կա, դա «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 23-րդ հոդվածն է, որ փորձաքննություն պետք է իրականացվի: Փորձաքննական մարմին չկա, փորձաքննության անցկացման կարգը չի սահմանած, մինչ այսօր փորձաքննություն չի արվում: Վերջապես այս օրենքն ընդունելուց տասնամյակներ հետո հետո պե՞տք է այդ մեխանիզմը մտցվի և արվի: Չէ՞ որ Առողջապահության

նախարարությունը կանխարգելիչ միջոցառումներ է սկզբից անում: Եկեք կանխարգելենք. այդ ծրագիրը ձեռք ներկայացնենք, դուք փորձաքննություն արեք, և դրա հիման վրա նոր գնա Շրջակա միջավայրի նախարարություն, ոչ թե հակառակը:

- **Արտակ Դեմիրչյան՝ ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ.**

-Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ընդերքի շահագործումը բազում խնդիրներ է առաջացնում թե՛ շրջակա միջավայրի, թե՛ մարդու առողջության համար: Առհասարակ, ոչ թունավոր նյութ գոյություն չունի, նույնիսկ ոսկին, որ համարվում է ազնիվ մետաղ, քիմիապես պասիվ է, նույնիսկ ոսկին մարդու օրգանիզմի մեջ կուտակումներ է առաջացնում, վնասում: Հաշվի առնելով, որ Հայաստանում կան մետաղագեն պրովինցիաներ, որտեղ շատ կան մետաղների հանքավայրեր, մենք բացի ընդերքի շահագործումը պետք է հաշվի առնենք նաև բնական ֆոնը: Ախթալա գետում, որը գտնվում է Շնող գետից և Թեղուտի հանքավայրից վերև, այնտեղ 5-րդ դասը պայմանավորված է հիմնականում, որ Ախթալա գետում կա մոլիբդենի շատ մեծ կոնցենտրացիա, բայց Ախթալայի լեռնահարստացման կոմբինատը մոլիբդեն չի արդյունահանում, չի վերամշակում: Գալիս է մի հետևություն, որ տվյալ գետ մոլիբդենը հասնում է մոլիբդենաբեր երակներով, երոզիայի է ենթարկվում և այնտեղից գոյանում է տվյալ բարձր կոնցենտրացիան: Խոսվեց պոչամբարներից: Պետք է նաև չմոռանանք, մետաղաձուլական գործարանի ազդեցությունը, որպես ծանր մետաղների մեծ աղբյուր: Բազում հանքավայրերի ծրագրեր են կազմվում շահագործման, հետո՝ ընդլայնման, հասարակական լուումներ լինում են, և շատ դեպքերում հասարակական կազմակերպությունը կամ պրոֆեսիոնալ մասնագետներ՝ մեր ոլորտների, ներկա չեն լինում քննարկումներին: Գնում ենք գյուղ, տեսնում ենք հասարակական լուումներին ներկա է մի 10 գյուղացի, ովքեր չեն հասկանում՝ ծանր մետաղն ինչն է: Դա շատ մեծ միևնու է մեզ՝ բոլորիս, որովհետև եթե մենք ՇՄԱԳ-ին ճիշտ արձագանք տանք, այդ գործընթացը հենց սկզբից կարող է կասեցվել կամ ճիշտ ռելսերի վրա դրվել:

Մենք անընդհատ շեշտում ենք, որ Հայաստանի վիճակը ընդերքի վերամշակումից շատ վատ է: Ամերիկայում, Կանադայում, Ավստրալիայում կան կապարի, սնդիկի, ուրանի հանքավայրեր, որոնք շահագործվում են, 10-100-ապատիկ ավելի կոնցենտրացիան են: Բայց այնտեղ ամեն ինչը գործում է օրենքի սահմաններում, թույլատրելի սահմանային արտանետումների չափաքանակներով: Եթե ամերիկացին կարողանում է տվյալ ֆիլտրը դնել, որ արտանետումներ չլինի, իր հասարակությունն առողջ լինի, մենք էլ այդ նույն ֆիլտրերը կարող ենք դնել: Կարծում եմ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը պետք է վերանայել, երկրորդ՝ պետք է բնավճարները, տուգանքները 10-100-ապատիկ ավելացնել, այնպիսի

տուգանքներ դնել, որպեսզի ոչ մեկի մտքով անգամ չանցնի արտանետումներ կատարել:

Մենք ստեղծել ենք աշխատանքային թիմ, որը վեր է հանել ամբողջ Լոռու հանքարդյունաբերությունից առաջացող ռիսկերը՝ սկսած դրենաժային ջրերից, պոչմաքարներից, արտանետումներից և այլն: Բոլորի պահով չեմ ասում 100 տոկոսանոց լուծումներ ենք գտել, բայց գտել ենք, թե ինչպես կարելի է ուտիլիզացնել այն նյութը որը համարվում է թափոն, որը մեզ թունավորում է, դա վեր ենք ածում օգտակար նյութի: Եթե գործարանում աշխատում է 50 հոգի, եթե թափոնը վերամշակելու է, կաշխատի 100 մարդ, առանց արտանետումների:

#### 4. Տուժողների վկայությունները

##### • Արշավիր Խալափյան՝ «Հակակոռուպցիոն Ազգային Բյուրո» ՀԿ-ի նախագահ.

ՀՀ-ն տարածքում Շրջակա միջավայրի փորձաքննությունն իրականացվում է համապատասխան «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳ) մասին» ՀՀ օրենքի:

Ըստ սույն օրենքի 7-րդ հոդվածի՝ ՇՄԱԳ գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը հետևյալներն են՝

- մթնոլորտային օդի որակական և քանակական ցուցանիշները,
- մակերևութային և ստորերկրյա ջրերը,
- հողը՝ նպատակային նշանակությունը,
- երկրաբանական կառուցվածքը,
- ռելիեֆը, լանդշաֆտը, բնության հատուկ պահպանվող տարածքները,
- բուսական ու կենդանական աշխարհը,
- անտառները՝ տեսակային կազմը, վիճակը և անտառի այլ բնութագրեր,
- կառույցները, պատմության և մշակույթի հուշարձանները,
- թափոնների կազմը, պահեստավորումը, պահումը, պահպանումը,
- ֆիզիկական ազդեցությունները՝ աղմուկը, տատանումները,
- ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները,
- սոցիալական գործոնները, ժողովրդագրական կազմն ու բնակչությունը,
- արտակարգ իրավիճակների հավանականությունը:

Ներկայացնեմ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) ՓԲԸ-ի կողմից պատրաստված ՇՄԱԳ հաշվետվությունների համապատասխանությունը ՀՀ օրենքի պահանջներին: Ընկերության կողմից չի ուսումնասիրվել շրջակա միջավայրի դիտարկվող օբյեկտները և բնութագրերը.

1. մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց կատեգորիան, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, ջրօգտագործումը, ջրահեռացումը, ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը և այլ բնութագրերը

2. հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը, հողերի այլ բնութագրեր

3. բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը և գոյության պայմանները, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը,

կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, Հայաստանի Հանրապետության կենդանիների կամ Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքերում գրանցված կենդանիների, բույսերի առկայությունը.

4. անտառները՝ գործառնական նշանակությունը, տեսակային կազմը, վիճակը և անտառի այլ բնութագրեր.

5. ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.

6. արտակարգ իրավիճակների հավանականությունը:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետ՝ «Մակերևութային և ստորերկրյա ջրերը, դրանց կատեգորիան, հոսքի ռեժիմը, որակական և քանակական ցուցանիշները, ջրօգտագործումը, ջրահեռացումը ջրային համակարգը կամ դրա առանձին մասերը և այլ բնութագրերը.»**

• Ընկերությունը մանրակրկիտ չի ուսումնասիրել Արծվանիկի պոչամբարից արտահոսող կեղտաջրերի (շուրջ 1500 լ/վ) ազդեցությունը Նորաշենիկ գետի վրա.

• Ընկերությունն ընդհանրապես չի ուսումնասիրել շուրջ 5 կմ հեռավորության վրա գտնվող Ողջի գետի վրա հավանական ազդեցություն, երբ Արծվանիկի պոչամբարից արտահոսող կեղտաջրերը թափվում են Նորաշենիկ գետ, այնուհետև Ողջի գետ:

• Ընկերությունը որևէ կերպ չի ուսումնասիրել այն գործոնը, որ Արծվանիկի պոչամբարից արտահոսող կեղտաջրերը թափվում են Նորաշենիկ գետ, որը հանդիսանում է մերձակա գյուղատնտեսական հողերի միակ ոռոգման աղբյուրը

• Ընկերությունը որևէ կերպ չի ուսումնասիրել բաց հանքի, դատարկ ապարների լցակույտի և պոչամբարի տարածքներից հնարավոր թթվային դրենաժի ռիսկը:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետ՝ «Հողը՝ նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը, կարգը, որակը, վիճակը, կազմը, աղտոտվածությունը, դեգրադացիան, բերրի շերտի օգտագործումը, հողերի այլ բնութագրեր.»**

• Ընկերությունը որևէ կերպ չի անդրադարձել Արծվանիկի պոչամբարի շահագործման արդյունքում անվերադարձ վնասվող բուսահողի ծավալներին:

• Ընկերությունը որևէ կերպ չի անդրադարձել դատարկ ապարների պահեստավորման արդյունքում վնասվող անտառային հողերի պահպանմանն ու կառավարմանը:

• Ընկերությունը, իրականացնելով այդ ծավալի վերգետնյա արդյունաբերական գործունեություն, չունի հողի բերրի շերտի պահեստարաններ և որևէ կերպ չի կառավարում ռիսկային գոտում գտնվող բուսահողի ծավալները:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետ՝ «Բուսական ու կենդանական աշխարհը, դրանց տեսակային կազմը և գոյության պայմանները, բուսական ու կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործումը, կենդանի վերափոխված օրգանիզմների գործածությունը, Հայաստանի Հանրապետության կենդանիների կամ Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքերում գրանցված կենդանիների, բույսերի առկայությունը.»**

• Ընկերությունը չի ուսումնասիրել ՀՀ Կարմիր գրքում ներառված և տվյալ տարածաշրջանին հատուկ ճպուռների դասից՝ 1, թռչունների դասից՝ 14, կաթնասունների դասից՝ 5, ձեռքաթևավորների դասից 6 ֆաունայի և ֆլորայի տեսակ:

• Ընկերության կողմից չի գնահատվել գործունեության ազդեցությունը տարածքի ֆլորայի և ֆաունայի, հատկապես Կարմիր գրքային տեսակների վրա, ուստի չի ձեռնարկվել նաև շրջանցման, մեղմացման և փոխհատուցման գործողություններ:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ կետ՝ «Անտառները՝ գործառնական նշանակությունը, տեսակային կազմը, վիճակը և անտառի այլ բնութագրեր.»**

• Ընկերությունը որևէ կերպ չի անդրադարձել դատարկ ապարների լցակույտի ձևավորման արդյունքում լցակույտի տակ մնացող ավելի քան 40 հա ոչնչացող անտառի վնասի հաշվարկին և այլն:

• Ընկերությունը ՇՄԱԳ հաշվետվության մեջ որևէ կերպ չի անդրադարձել պահանջվող անտառվերականգման միջոցառումներին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ կետ՝ «Ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները.»**

• Ընկերությունը չի ներկայացրել որևէ վիճակագրություն՝ կապված տարածաշրջանի էլակետային առողջապահական ցուցանիշների հետ.

• Որևէ կերպ չի գնահատվել Ընկերության գործունեությամբ պայմանավորված առողջապահական վիճակի փոփոխության ռիսկերը.

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 13-րդ կետ՝ «Արտակարգ իրավիճակների հավանականությունը.»**

• Ընկերությունը որևէ կերպ չի ուսումնասիրել և չի գնահատել դատարկ ապարների լցակույտի սեյսմիկ կայունությունը, այն դեպքում երբ դատարկ ապարների լացակույտը շահագործվում է դեռևս 1970թ-ից և գտնվում է Քաջարան քաղաքից 800 մ հեռավորության վրա:

• Ընկերությունը որևէ կերպ չի իրականացրել պոչամբարի պատնեշի կայունության գնահատում (ինչպես նախկին այնպես էլ ընդլայնված շահագործական ծավալների դեպքում), այն դեպքում երբ հնարավոր վթարի դեպքում պոչամբարի տակ կանցնեն հարակից համայնքները և գյուղատնտեսական նշանակության հողերը:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍՏՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ**

• «ԶՊՄԿ» ՓԲԸ որևէ կերպ չի կիրառում միջազգային ստանդարտները և միջազգային լավագույն փորձը:

Վերը նշված հիմնավորումները հիմք են հանդիսանում, որպեսզի ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը չեղարկի «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության ՇՄԱԳ-ին 2016 թվականին տված դրական բնապահպանական եզրակացությունը և նոր փորձաքննություն իրականացնի:

- **Օլեգ Դուլգարյան՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի տնօրեն**



Ներկայացնում են Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի կողմից շահագործվող «Նահատակ» պոչամբարի հետ կապված խնդիրները:

1. Պոչամբարում չի գործում ջրի շրջանառու համակարգ:

2. 2015 թվականին Մեծ Այրում գյուղի արոտավայրերը, անօրինական կարգով համայնքապետարանի կողմից տրամադրվում էին Ախթալայի ԼՀԿ-ին քանդելու և հողը պոչամբարի դամբաները կառուցելու նպատակով, որի արդյունքում խեղաթյուրվում էր գյուղի լանդշաֆտը, վնաս էր հասցվում արոտավայրերին, անընդհատ բարձրացվում էր պոչամբարի տարողունակությունը: Եղել են նաև մասնավոր հողատարածքների քանդման դեպքեր:

3. 2015 թվականին Մեծ Այրումի համայնքապետը և համայնքի ավագանին, դեմ գնալով համայնքի բնակիչների կամքին, հողի մոտ 13 000 հա հողի կարգը փոխեց գյուղատնտեսական նշանակությունից հանքարդյունաբերականի, որպեսզի գյուղում կառուցվի նոր պոչամբար: Նույնը իրականացրեց նաև Ճոճկանի համայնքապետարանը, սակայն, Ճոճկանում համաժողովրդական պայքար այդ առումով չկար:

4. «Նահատակ» պոչամբարի մոտ գտնվող և տասնամյակներով գյուղը սնող բնական աղբյուրը մնաց պոչամբարի տակ համայնքապետարանի թույլտվությամբ:

5. Պոչամբարի ջրերը ժամանակ առ ժամանակ հոսում և խառնվում են Դեբեդ գետի ջրերին, որոնցով Այրումի և այլ շրջակա գյուղերի բնակիչները որոգում են իրենց այգիները: Ըստ այրումցիների և Շնող գյուղի բնակիչների՝ այդ ջրերով որոգված այգիները չորացել և չորանում են:

6. 2014 թվականին քիմիկոս Սեյրան Մինասյանը Մեծ Այրումի դեղձը ենթարկեց փորձաքննության և պարզեց, որ նրանց մեջ ծանր մետաղների առկայությունը գերազանցում է նորման բազմաթիվ անգամներ:

7. 2015 թվականին Հայաստանի Ամերիկյան համալսարանը Ախթալայի երեխաների արյան փորձաքննություն իրականացրեց և պարզեց, որ ծանր մետաղները երեխաների արյան մեջ գերազանցում են նորման բազմաթիվ անգամներ:

8. 2018 թվականին «ԱՐՆԻԿԱ» չեխական կազմակերպությունը իրականացրեց Մեծ Այրումի և Ախթալայի, հողերի, գետի ջրերի նմուշների փորձաքննություն և արձանագրեց ծանր մետաղների նորմայից բարձր առկայություն դրանց մեջ:

9. Մեծ Այրում գյուղի գյուղատնտեսական ապրանքները մոտակա շուկաներում չեն վաճառվում, քաղաքացիները խուսափում են գնել այն՝ կասկածելով, որ այդ ապրանքների մեջ առկա են ծանր մետաղներ և այլ թունավոր նյութեր շրջակա միջավայրին հասցված վնասի պատճառով, ինչի արդյունքում գյուղատնտեսությունն այդ գյուղերում անկում է ապրում:

10. Գյուղացիներն արդեն բավական երկար տարիներ գյուղում բողոքում են առողջական խնդիրներից, մասնավորապես, գլխացավերից, թունավորումներից և ճնշման տատանումներից, ինչը կապում են պոչամբարի առկայության հետ:

11. Պոչամբարը տարիներ շարունակ չի ցանկապատվել, բացակայում են անվտանգության նորմերը, ընտանի կենդանիներն արածում են պոչամբարի շուրջ, երեխաները խաղում են, եղել են դեպքեր, երբ ընտանի կենդանիները խորտակվել են պոչամբարում:

12. Պոչամբարը բարձրացել է իր ծավալներից և վտանգ է ներկայացնում իրենից: Պոչամբարի մակարդակն արդեն իսկ ավելի բարձր է Մեծ Այրում-Ճոճկան միջհամայնքային ճանապարհից:

13. Արտակարգ իրավիճակների նախարարությունը չի տիրապետում տեղեկատվության՝ Նահատակ պոչամբարի անվտանգության խնդիրների մասին:

14. Բնապահպանության նախարարությունը, Շրջակա միջավայրի պահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Առողջապահության նախարարությունը անգործություն են դրսևորել և պատշաճ ձևով չեն արձագանքել խնդիրներին:


### **5. Վկաների վկայությունները.**

- **Լևոն Գալստյան՝ «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն.**

Քաջարանի պղնձամուխրդենային հանքավայրը շահագործող ընկերությունը տարիներ շարունակ անպատիժ խախտել է ՀՀ օրենքները: ՀՀ բնապահպանության նախարարությունը 2016 թվականի դեկտեմբերի 16-ին դրական եզրակացություն է տվել «Ջանգեգուրի պղնձամուխրդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (հետագայում ՋՊՄԿ) կողմից շահագործվող Քաջարանի պղնձամուխրդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություններին: Նախարարության կողմից տրված այս դրական եզրակացության համաձայն՝ Քաջարանի հանքավայրից տարեկան կթույլատրվի արդյունահանել մինչև 22 միլիոն տոննա հանքաքար՝ մինչև այժմ թույլատրված 12,5 միլիոնի փոխարեն: Տարեկան մինչև 12,5 միլիոն տոննա հանքաքար արդյունահանելու իրավունքն ու բնապահպանական փորձաքննական դրական եզրակացությունը ՋՊՄԿ-ին տրվել էր դեռ 2007 թվականին, ինչը վերջին 10 տարվա ընթացքում ոչ մի փոփոխության չի ենթարկվել: Իսկ դա էլ իր հերթին նշանակում է, որ հանքը շահագործող ընկերությունն իրավունք չունի արդյունահանել պետական լիազոր մարմինների կողմից թույլատրված ծավալներից ավելի հանքաքար:

Սակայն, «Հայկական բնապահպանական ճակատ» (ՀԲՃ) քաղաքացիական նախաձեռնությունը բաց աղբյուրների ուսումնասիրման և պետական մարմիններին ուղղված հարցումների արդյունքում ստացված տեղեկություններից դեռ 2017թ. պարզել է, որ ՋՊՄԿ-ն 2010 թվականից սկսել է ապօրինաբար ավելացնել իր արդյունահանման ծավալները՝ 2012-2016թթ. հասցնելով դրանք տարեկան 17-19 միլիոն տոննայի (տես ինֆոգրաֆիկան):

**Քաջարանի հանքավայրից արդյունահանված  
հանքաքարի ծավալները. 2007-2016**



*Ըստ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների  
նախարարությունից ստացված պաշտոնական տվյալների @ՀԲԾ*

Ստացվում է, որ 2010-2016թթ. ընթացքում ԶՊՄԿ-ն թույլատրվածից 29,7 միլիոն տոննա ավելի հանքաքար է արդյունահանել ու վերամշակել, ինչի արդյունքում նույն չափով լրացուցիչ հանքահարստացման թափոններ են տեղադրվել Արծվանիկի պոչամբարում՝ մեծացնելով տարբեր ճանապարհներով բնական միջավայրի աղտոտման ծավալները: Բնականաբար, համապատասխան չափով մեծացել են նաև դատարկ ապարների լցակույտների, ֆլուտացիայի ժամանակ կիրառվող տարբեր քիմիական ռեագենտների, մթնոլորտային օդի և ջրերի մեջ տարաբնույթ արտանետումների ծավալները:

Իսկ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը ԶՊՄԿ-ում 2018-2019թթ. անցկացրած ստուգումների արդյունքներից պարզել է, որ 2017 թվականին հանքավայրի հաշվեկշռային պաշարներից փաստացի մարվել է 27,2մլն. տոննա հանքաքար, մինչդեռ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված է տարեկան 22,0 մլն. տոննա: Արդյունքում ստացվում է, որ 2010-2017թթ. ընթացքում ԶՊՄԿ-ն Քաջարանի հանքավայրից ապօրինի արդյունահանել է 34,9 միլիոն տոննա հանքաքար:

Այս գործողությունը մինչև 2014 թվականի օգոստոսի 9-ը գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի բացահայտ և կոպիտ խախտում է: Այդ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետում հստակ գրված է հետևյալը. «Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում լիազորված մարմինը պարտավոր է մասամբ կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչև փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը»: Չի գործել նաև դրանից հետո ուժի մեջ մտած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետի հետևյալ պահանջը. «Փորձաքննական դրական եզրակացությունն

ուժը կորցրած է ճանաչվում, եթե գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով»:

Բացի այդ, ՋՊՄԿ-ն խախտել է նաև 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ «Ընդերքի մասին օրենսգրքի» 59-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի հետևյալ պահանջը. «Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է աշխատանքներն իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան»:

Այս խախտումներն այնքան բացահայտ են եղել, որ ՀՀ բնապահպանության և էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունները, ինչպես նաև համապատասխան տեսչություններն ուղղակի չէին կարող դրա մասին չիմանալ: Իսկ այսպիսի պարզ խախտումը տեսնելն ու ընդհանրապես ոչ մի քայլ չձեռնարկելը նշանակում է, որ պետական լիազոր մարմինները կամ ցուցաբերել են հանցավոր անգործություն, կամ ներգրավված են եղել առերևույթ կոռուպցիոն գործարքների մեջ:

Ջարմանալի է նաև, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն իր վերջին ստուգման արդյունքների մեջ նշել է, որ 2017թ. սահմանվածից 5,2 միլիոն տոննա ավել պաշարներն են մարվել, բայց մեր տեղեկություններով այդ փաստի առթիվ ոչ մի գրություն չի ուղարկվել մյուս պետական լիազոր մարմիններին՝ խախտմանը համապատասխան իրավական գնահատական տալու համար:

Ամեն դեպքում ցանկալի կլիներ իմանալ նաև պետական լիազոր մարմինների և Քաջարանի հանքավայրը շահագործող ՋՊՄԿ-ի և նրա 60 տոկոսի բաժնետեր գերմանական «Քրոնիմետ մայնինգ» (CRONIMET Mining) ընկերության ղեկավարության պարզաբանումները: Բնական հարց է առաջանում, թե արդյոք գերմանական ընկերությունն իրեն թույլ կտար նույն կերպ վարվել օրենքների և բնության հետ Գերմանիայում, ինչպես դա անում է Հայաստանում:

Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ ահազանգեր են եղել այն մասին, որ ՋՊՄԿ-ն խախտում է ընդերքօգտագործման պայմանագրով ու փորձաքննական եզրակացությամբ սահմանված պայմանները: Դեռ 2014 թվականին ՀԲԾ-ն պաշտոնական հարցում էր ուղարկել ՀՀ բնապահպանության նախարարությանը, որտեղ ի թիվս այլ խնդիրների ահազանգել էր նաև Քաջարանի հանքավայրից թույլատրված ծավալից ավելի հանքաքար արդյունահանելու փաստերի մասին: Սակայն նախարարությունն այն ժամանակ օրենքի պահանջները կիրառելու փոխարեն, ընդամենը մեզ պատասխանեց, թե ՋՊՄԿ-ն ավելացված տարեկան 22մլն. տոննա հանքաքարի արդյունահանման համար մշակում է համապատասխան փաստաթղթերի փաթեթ, ինչը կներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Բազմաթիվ ահազանգեր են եղել նաև բնական միջավայրն աղտոտելու վերաբերյալ:

- **Աննա Շահնագարյան՝ «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն.**

-Ես ուզում եմ մատնանշել, որ խնդրի սրությունը նպաստում են նաև ընդհանուր քաղաքականությունը և այդ քաղաքականությունը վարելու լոբբինգով զբաղվող, կոնկրետ

շահեր հետապնդող սուբյեկտներ: Այս հարցը հնարավոր չէ դիտարկել զուտ առանձին: Հնարավոր չէ հանքարդյունաբերության և դրա հետևանքների, դրա արդյունքում էկոլոգիական հանցագործություն որակվող երևույթը մեկնաբանել առանց հասկանալու դրա կապը միջազգային համատեքստում, առանց հասկանալու, որ իրականում Հայաստանում պետական քաղաքականությունը և ոչ պաշտոնական մոտեցումները ինչ-որ իմաստով նաև սպասարկում են միջազգային հանքարդյունաբերական բիզնես-լոբբինգը: Ներկա և նախկին պաշտոնյաներ, փաստաբաններ, իրավաբաններ այս կամ այն կերպ մշտապես մասնակցում են Հայաստանում հանքարդյունաբերական քաղաքականության, օրենսդրության ընդունմանը, մշակմանը: Մենք գործ ունենք այն իրավիճակի հետ, երբ հանքարդյունաբերական բիզնես-լոբբինգը մշտապես ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում է Հայաստանում ոլորտի և վերահսկող, և նորմատիվներ սահմանող և ընդհանրապես ոլորտին առնչվող բոլոր տեսակի որոշումների կայացմանը: Սա նշանակում է, որ մենք գործ ունենք շատ բարդ ոլորտի հետ, որտեղ կոռուպցիոն ահռելի մեծ իրավիճակ է ստեղծվել, և անհնար է սա դիտարկել ներպետական սահմանների ներքո, ինչպես բնապահպանական ազդեցությունն է անհնար ամբողջ աշխարհում գնահատել ներպետական սահմաններում:

Մի ծրագիր է իրականացվել, որի էությունը հետևյալն է. Պետությունը բազմաթիվ նորմատիվներ, կարգավորիչ դրույթներ է կիրառում, որը խանգարում է բիզնեսի ծավալմանը և արդյունավետ գործունեությանը, դրա համար պետք է գիյոտինի ենթարկել, այսինքն՝ հանել այդ նորմատիվ դրույթները:

Ես անձամբ չեմ հետազոտել հանքարդյունաբերության ոլորտի ինչ նորմատիվներ են հանվել, կամ դադարեցվել, բայց կարող եմ վստահաբար ասել, որ նաև պատճառը այս իրավիճակի այն է, որ Հայաստանում հանքարդյունաբերական քաղաքականության վրա, ընդհանուր առմամբ, ազդում է բիզնես-լոբբինգը:

2018թ. Ամուսլարի հոգաբարձուների խորհրդին ներկայացված զեկույցի մեջ նաև նշված է իրենց տնօրենների աստղաբաշխական թվերի հասնող աշխատավարձերի և բոնուսների չափը: Վերջերս աչքովս ընկավ, որ Ալոյան Հայկին տարեկան աշխատավարձի չափով բոնուսը տրվում է նրա համար, որ նա մասնակցել է Հայաստանում հանքարդյունաբերական ոլորտի օրենսդրության մշակման աշխատանքներին: Սա ևս մեկ օրինակ է նրա, որ հանքարդյունաբերական բիզնես-լոբբինգը մշտապես գտնվում է Հայաստանի, պետության մեջ, պետության ձեռքերն է, կամ այդ ձեռքերով այլ գործունեություն է վարում, որը իրեն է շահավետ: Պետությունը շատ ուղղակիորեն մշտապես աշխատում է հանքարդյունաբերական բիզնեսին ի նպաստ և ի շահ: Եվ դա, կարծում եմ, հանրային դատարանը պետք է հաշվի առնի:

- **Ելենա Մանվելյան՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ**

Ես հակիրճ կներկայացնեմ երեք կազմակերպությունների՝ չեխական «ԱՐՆԻԿԱ» քիմիական անվտանգության կազմակերպության, «ԷկոԼուրի» և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» կողմից «Քաղաքացիական հասարակության

ներգրավումը Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտում որոշումների կայացման գործընթացում» ծրագրով իրականացված ուսումնասիրության արդյունքները: Ծրագիրն իրականացվել է Չեխիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ: Ուսումնասիրության նպատակն էր մշտադիտարկել Ալավերդիում, Շնողում և Ախթալայում ծանր մետաղների առկայությունը՝ պայմանավորված արդյունաբերական ձեռնարկությունների առկայությամբ, և բացահայտել դրանց պոտենցիալ ռիսկերը մարդու առողջության համար: Ուսումնասիրվել են հողի, գետերի հունների, մանկական խաղահրապարակների ավազի, մարդկանց մազերի և այլ կենսանյութերի նմուշները՝ որոշելու մարդու առողջության վրա շրջակա միջավայրի աղտոտվածության ազդեցությունը: Նմուշների ուսումնասիրությունը կատարվել է Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանում և Չեխիայի Հանրապետության Առողջապահության ազգային ինստիտուտում:

Հաշվի առնելով շրջանում արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը՝ հիմնական աղտոտիչը պղինձն է, ապա ցինկը, մոլիբդենը և կապարը, որոնք լուրջ ազդեցություն են թողնում մարդու առողջության վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Ալավերդու տնական հավի ձվերում առկա է դիօքսին: Այն, ամենայն հավանականությամբ, առկա է նաև տնային այլ կենդանական ծագմամբ սննդատեսակներում, և դրանց առօրյա օգտագործումը պետք է բացառվի բնակչության, հատկապես՝ հղի կանանց և երեխաների սննդակարգում: Ալավերդու մանկական խաղահրապարակների ավազի փորձանմուշներում հայտնաբերվել է բարձր աղտոտվածություն պղնձով (մինչև 5200 մգ /կգ), մկնդեղով (140 մգ /կգ), ցինկով (1200 մգ/կգ) և կադմիումով (3.7 մգ/կգ): Ալավերդու պղնձաձուլարանի մոտակայքում գտնվող այգիների հողերում տազնապալի է պղնձով (մինչև 1900 մգ /կգ), մկնդեղով (մինչև 80 մգ /կգ) և ցինկով (մինչև 1800 մգ / կգ) աղտոտվածությունը՝ համեմատած հեռավոր վայրերի հետ:

Ալավերդու ճանապարհներին փռված խարամում, որը նաև կայուն օրգանական աղտոտիչների՝ դիօքսինների պոտենցիալ աղբյուր է, հայտնաբերվել են ծանր մետաղների բարձր կոնցենտրացիաներ՝ պղինձ՝ >9000 մգ/կգ, մոլիբդեն՝ >1600 մգ/կգ, ցինկ՝ >900 մգ/կգ:

Ալավերդու պղնձաձուլարանից ներքև՝ Դեբեդ գետի հունային նստվածքներում, պղնձի խտությունը կազմել է 2200մգ/կգ, մոլիբդենը՝ 350 մգ/կգ:

Շնող գետի՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի պոչամբարից ներքև գտնվող հատվածի հատակի նստվածքից վերցված նմուշներում մասնագետները հայտնաբերել են, որ պղնձի և մոլիբդենի պարունակությունը համապատասխանաբար 6 և 17 անգամ ավելի բարձր է, քան պոչամբարից վերև գտնվող գետի հատվածում: Աղտոտման աղբյուրը Թեղուտում

հանքարդյունաբերական գործունեությունն է, ինչպես նաև Թեղուտի պոչամբարից արտահոսքերը:

Ախթալա գետի հունի նստվածքների նմուշներն ուսումնասիրված նմուշներից ամենաաղտոտվածներն են, որտեղ պղնձի խտությունը կազմում է 9500 մգ / կգ, ցինկինը՝ 4000 մգ / կգ, մոլիբդենինը՝ 90 մգ/կգ, մկնդեղինը՝ 55 մգ/կգ:

Դեբեդ, Ախթալա և Շնող գետերը ծառայում են որպես ռոտգման ջրի աղբյուր այդ շրջանի այգիների ռոտգման համար: Սա ևս հանգեցնում է աղտոտիչների տարածման, որը ներկայումս անուղղակիորեն ազդում է մարդու առողջության վրա աղտոտված բանջարեղենի և մրգերի միջոցով: Այգիների հողի մեջ հայտնաբերվել է պղնձի և ցինկի բարձր խտություն:

Հիմնականում աղտոտվածության կրողները երեխաներն են:

Մենք դիմում ենք ՀՀ կառավարությանը՝ պահանջելով իրականացնել իր լիազորությունները՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ՀՀ Սահմանադրության, պարտավորեցնել տարածաշրջանի հանքարդյունաբերական ընկերություններին՝ «Թեղուտ» ՓԲԸ-ին, «Վալլեքս» խմբին, «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ին իրականացնել միջոցառումներ՝ բարձրացնելու պոչամբարների անվտանգությունը, կանխարգելել Շնող և Դեբեդ գետերի և տարածաշրջանի հողերի աղտոտումը ծանր մետաղներով, ներկայացնել շրջակա միջավայրի վերականգնմանն ուղղված ծրագրեր:

ՀՀ առողջապահության նախարարությունը պարտավոր է վեր հանել և վերլուծել հանքարդյունաբերական թեժ կետերում արված հետազոտությունները և ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված տեղի բնակչության առողջության ռիսկերի նվազեցմանը:

## **6. Փորձագիտական եզրակացություն**

### **Ռոզա Զուլիհալյան՝ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի փորձագետ**

Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության էքստենսիվ զարգացման, նոր տեխնոլոգիաների չներդրման, օգտակար հանածոների արդյունահանման էժան տեխնոլոգիաների շարունակական կիրառման արդյունքում հազվագյուտ և ցրված մեծ քանակությամբ էլեմենտների չկորզման և հանքանյութերի մշակման ամբողջական ցիկլի չապահովման հետևանքով Հայաստանի համար ստեղծվել են լուրջ մարտահրավերներ, որոնց հաղթահարումը պահանջում է ահռելի գումարներ: Առանձին դեպքերում հանքարդյունաբերության հետևանքներն ուղղակի անհնարին կլինի վերացնել:

2019թ. ապրիլի 1-ի դրությամբ հանրապետությունում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրվել է 28 իրավունք, իսկ մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության համար՝ 21 իրավունք: Այս բազային և թանկարժեք մետաղների հանքավայրերի թվում են 7

պղնձամուլիբդենային, 3 պղնձի, 14 ոսկու և ոսկու բազմամետաղային հանքեր, 2 բազմամետաղային և 2 երկաթի հանքավայր:

Մետաղական հանքավայրերի վատ կառավարումը հանգեցրել է հետևյալ խնդիրների՝

- Հողային ռեսուրսների կրճատում և հողերի աղտոտում
- Ստորերկրյա և մակերևույթային ջրերի աղտոտում
- Մթնոլորտային օդի աղտոտում հանքարդյունաբերության գործընթացում՝ պայթեցման աշխատանքների, արտադրական և պոչամբարների տարածքներից արտանետումների տեսքով
- Ապարաթթվային դրենաժային հոսքերի ձևավորում՝ Կապան, Շնող, Ախթալա, Ստեփանավան, Ագարակ, Դաստակերտ համայնքների տարածքներում
- Պոչամբարներում միլիոնավոր տոննաներով կուտակված վտանգավոր և թունավոր նյութեր
- Վտանգավոր և թունավոր նյութերի դիֆուզիա շրջակա միջավայր միլիարդավոր տոննաներով կուտակված հանքարդյունաբերական դատարկ ապարներից և լցակույտներից
- Պոչամբարների՝ որպես հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական անվտանգության ռիսկեր
- ՀՀ-ի հողերի անապատացման երևույթներ
- Սոցիալական կոնֆլիկտներ
- Ծանր մետաղների ազդեցության հետևանքով բնակչության մոտ առաջացած առողջապահական խնդիրներ
- Բնակչության սննդային ցիկլի աղտոտում:

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի նիստում N 36 արձանագրությամբ հավանության է արժանացած «ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգ»-ի 22-րդ կետում ուղղակիորեն նշվում է. «Հանքարդյունաբերության ոլորտը չի ապահովում շրջակա միջավայրի պահպանության, բարելավման և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման պահանջները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով»:

ՀՀ Սահմանադրությունը և ոլորտը կարգավորող հիմնական օրենսդրական ակտը՝ ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրքը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է: Այն կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով:

Հետևապես, ընդերքօգտագործման ոլորտի պետական կառավարման մարմինը՝ ի դեմս ՀՀ կառավարության, պատասխանատու է ոլորտում տիրող իրավիճակի համար: Առկա բնապահպանական, սոցիալական, առողջապահական ոլորտներում տիրող մտահոգիչ իրավիճակը հաստատվում է հետևյալ փաստարկներով.



## I. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ և ՀՈՂԵՐԻ ԱՂՏՈՏՈՒՄ

Շահագործվող մետաղական հանքավայրերի մակերեսը հանրապետությունում կազմում է 5211,45 հա, իսկ ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողերի ընդհանուր մակերեսը նախնական խոշորացված գնահատականներով կազմում է 13640 հա, չհաշված լցակայանների և արտադրական թափոնների տակ մնացած հողերի մակերեսները: Այսինքն, մետաղական հանքարդյունաբերության արդյունքում հանրապետության հողային ֆոնդի կրճատումը նշանակալի է:

Սյունիքում նկատվում է պոչերի հոսք դեպի Աճանան գետ, այդ կեղտոտված ջրերով ռոռզվում են Սյունիքի հողերը: Իսկ այդ հողերի վրա աճեցրած գյուղմթերքները վաճառվում են ամբողջ հանրապետության տարածքում:

Մեղրի խոշորացված համայնքի Կարճևան բնակավայրի գյուղատնտեսական հողերի աղտոտում «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի» ծանր մետաղներ պարունակող հանքաջրերով: <https://www.ecolur.org/hy/news/mining/--/10975/>:

Գեղարքունիքի մարզի Սոտք գյուղից էլ 1047 հա տրվել է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությանը Սոտքի հանքավայրի շահագործման ծրագրի ենթակառուցվածքների զարգացման համար: Այս տարածքն օգտագործվում է նաև դատարկ ապարների և լցակայանների տեղադրման համար:

«Մերձսևանյան օֆիոլիտային գոտու ապարների եւ հողի էկոերկրաքիմիական վիճակը» գիտական հոդվածը (Գեոլոգյան Ռ. Գ., Մինսայան Գ.Ա., Գեոլոգյան Մ. Ռ., «Вестник Отделения наук о Земле РАН» գիտատեղեկատվական ամսագիր, համար 27, 2009թ.) ամբողջությամբ հաստատում է այն փաստը, որ Սոտքի հանքավայրի շրջանում հողն աղտոտված է ծանր եւ տոքսիկ մետաղներով: «Սոտքի հանքավայրի բոլոր երեք հատվածներում աղտոտիչ տարրերի սպեկտրն ընդհանուր առմամբ նույնական է: Միննույն ժամանակ, ՍԹԿ-ն գերազանցող տարրերն են՝ Cr, Ni, Pb, Cu, Zn: Հողերի աղտոտման գումարային ցուցանիշի համաձայն՝ բոլոր երեք տարածքները պատկանում են խիստ աղտոտվածների կատեգորիային», - գրում են հեղինակները: Նշենք, որ ուսումնասիրված տարածքները մտնում են Սևանա լճի ջրահավաք ավազանի մեջ: Հայտնաբերված հիմնական աղտոտիչները՝ քրոմը, նիկելը, կապարը, պղինձը և ցինկը, տարրեր են, որոնք ունեն մուտագեն եւ օնկոգեն ազդեցություն, այսինքն՝ ունակ են առաջացնել հրեշաճություն և չարորակ հիվանդություններ: <https://onznews.wdcb.ru/publications/asempg/geoecol-4.pdf>

## ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

1. Սյունիքում՝ Դարազամի պոչամբարի հողագրունտում, գրանցվել են մոլիբդենի, պղնձի, նիկելի, կոբալտի և վանադիումի բարձր պարունակություններ: ՍԹԿ-ի առավելագույն գերազանցումներ արձանագրվել են մոլիբդենի համար 36 անգամ, կոբալտի՝ 8,4 անգամ և նիկելի՝ 8 անգամ («Քաջարան ք. էկոլոգիական իրավիճակի հետազոտություն», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2005)

2. Կապան քաղաքի հողերում պղնձի միջին պարունակությունները ՍԹԿ-ն գերազանցում են 4,1 անգամ, մկնդեղը՝ 4,0 անգամ, նիկելը՝ 2,5 անգամ, կապարը՝ 2,4 անգամ, մոլիբդենը՝ 1,94 անգամ:

Արծվանիկի պոչամբարի հետազոտված լանջային հողերի հետազոտության արդյունքում գրանցվել են պղնձի 4,5 անգամ, մոլիբդենի 2,6 անգամ և նիկելի՝ 2,6 անգամ ՍԹԿ-ից բարձր պարունակություններ: Սյունիք գյուղական համայնքի մասնավոր հողատեսքերում հետազոտությունների արդյունքում գրանցվել են պղնձի 6,0 անգամ ՍԹԿ-ից բարձր, մոլիբդենի 4,0 անգամ և նիկելի 2,46 անգամ ՍԹԿ-ներից բարձր պարունակություններ («Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2007):

3. Ալավերդի, Ախթալա քաղաքների, Ճոճկան, Քարկոպ և Նեղոց համայնքների տնամերձ հանդակների հողերում գրանցվել են մի շարք ծանր մետաղների գերնորմատիվ պարունակություններ, այդ թվում վտանգավորության I (As, Pb, Zn) և II (Cu) դասի տարրերի համար <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/akhtalaarm.pdf>:

«Արնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի մասնագետների 2018թ-ի ուսումնասիրության համաձայն՝ Ալավերդու մանկական խաղահրապարակների ավազի փորձանմուշներում հայտնաբերվել է բարձր աղտոտվածություն պղնձով (մինչև 5200 մգ /կգ), մկնդեղով (140 մգ /կգ), ցինկով (1200 մգ/կգ) և կադմիումով (3.7 մգ/կգ): Ալավերդու պղնձաձուլարանի մոտակայքում գտնվող այգիների հողերում տազնապալի է պղնձով (մինչև 1900 մգ /կգ), մկնդեղով (մինչև 80 մգ /կգ) և ցինկով (մինչև 1800 մգ / կգ) աղտոտվածությունը՝ համեմատած հեռավոր վայրերի հետ:

Ալավերդու ճանապարհներին փոված խարամում, որը նաև կայուն օրգանական աղտոտիչների՝ դիօքսինների պոտենցիալ աղբյուր է, հայտնաբերվել են ծանր մետաղների բարձր կոնցենտրացիաներ՝ պղինձ՝ >9000 մգ/կգ, մոլիբդեն՝ >1600 մգ/կգ, ցինկ՝ >900 մգ/կգ (“Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia”, Author: Martin Bystrianský, Contributing authors: Marek Šír, Jitka Straková, Nikol Krejčová, <https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf>):

4, ՀՀ Արագածոտնի մարզի Մելիք, Ռյա Թազա և Միրաք գյուղերի հողերն աղտոտված են «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ի կողմից Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման հետևանքով արտազատված ծանր մետաղներով և տոքսիկ տարրերով: Մելիք գյուղից վերև գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության «Հայէկոմոնիտորինգ» ՊՈԱԿ-ի դիտակետի նմուշներում ուսումնասիրված տարրերի պարունակությունը 1.2-2.5 անգամ գերազանցում է և Միրաք գյուղից ներքև և Ռյա Թազա-Միլիք գյուղի միջանկյալ տարածքի դիտակետերի նմուշներում դիտվող պարունակությանը: Մելիք գյուղի հողերում քրոմի

(Cr) պարունակությունը կազմում է 168,4499մգ/կգ, Միրաք գյուղի հողերում՝ 130,274մգ/կգ, Ռյա Թագա և Մելիք գյուղերի միջնամասում՝ 101,4462մգ/կգ,/(ԱԹԿ) 90մգ/կգ/: Բերիլիումը (Bi) Մելիք գյուղում՝ 0.2543 մգ/կգ, Միրաք գյուղում՝ 0.109 4մգ/կգ, Ռյա Թագա և Մելիք գյուղերի միջնամասում՝ 0.1732 մգ/կգ, Հալավար և Քասախ գետերի նստվածքներ՝ 0.0976 մգ/կգ և 0.181մգ/կգ /ԱԹԿ 0/: Արսենի (As) պարունակությունը կազմել է՝ Մելիք գյուղում՝ 17.9547040 մգ/կգ, Միրաքում գյուղ՝ 14.2452340 մգ/կգ, Ռյա Թագա և Մելիք գյուղերի միջնամասում՝ 12.1213120 մգ/կգ, Հալավար և Քասախ գետերի նստվածքներում՝ 43.7601920 մգ/կգ և 3.9665200 մգ/կգ, մինչդեռ արսենի ԱԹԿ-ն 10.0 մգ/կգ է: («Թուխմանուկի հանքավայրի գոտու հողերի և գետերի հատակային նստվածքների էկոքիմիական վերլուծություն», Մեյրան Մինասյան, 2013թ. <http://ecolur.org/hy/news/mining/---/4961/>):

Մասրիկ և Սոտք գետերի հատակի նստվածքը պարունակում է ծանր մետաղների մի ամբողջ փունջ, որի պրոֆիլն ամբողջովին արտացոլում է Սոտքի ոսկու հանքավայրում այդ մետաղների պարունակման պրոֆիլը:

Նշենք, որ Սոտքի ոսկու հանքավայրի վերազինման աշխատանքային նախագիծը 2012թ-ին ստացել է բնապահպանական փորձաքննության դրական եզրակացություն, չնայած նրան, որ նախագծում ներառված էր Սևանի ավազանում վերամշակման գործունեություն, ինչն արգելված է «Սեւանա լճի մասին» ՀՀ օրենքով: Մինչև բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության ստանալը «Geopromining Gold» ընկերությունը Սոտքում կառուցեց հանքաքարի ջարդման-տեսակավորման համալիր: Ստացված կոնցենտրատը տեղափոխվում է Արարատ՝ ոսկու կորզման ֆաբրիկա, իսկ լցակույտերը կամ դատարկ ապարները, որոնք պարունակում են ծանր մետաղներ, թափվում են ճանապարհի երկարությամբ:

Բնապահպանության նախարարության փորձագետները նշում էին, որ դատարկ ապարներն իրենցից ոչ մի վտանգ չեն ներկայացնում: Այս հարցի պատասխանը տվեց Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, որը փաստեց, որ լցակույտերում վտանգավոր բաղադրիչներ կան: Ամուլսարի ոսկու քվարցիտների հանքավայրի բաց եղանակով շահագործման նախագծին բացասական եզրակացություն տալով՝ Սեւանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը մասնավորապես գրել էր. «...նախագծում լցակույտի համար նախատեսված իջույթի հիդրոերկրաբանական առանձնահատկությունների շնորհիվ դիտարկվում են գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, որոնք լցակույտում պարունակվող վտանգավոր բաղադրիչները կտեղափոխեն Որոտանի գետահունը, այնուհետև Որոտան-Արփա-Սևան թունելով նաև Սևանա լիճ»:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՍԻԱ  
ՍԵՎԱՆԻ ԼՅՈՒՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF ARMENIA



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

COMMITTEE OF EXPERTS ON  
PROTECTION OF THE LAKE SEVAN

ЭКСПЕРТНАЯ КОМИССИЯ ПО  
ОХРАНЕ ОЗЕРА СЕВАН

24d, Baghramian Ave., N .375019 Yerevan,	375019 ք.Երևան մ.Բաղրամյանի պ.24դ	Республика Армения, Ереван 375019, пр.м.Баграмяна 24д,
---	--------------------------------------	---

Ե/18/2012  
09.08.2012թ.

“Էկոլոյր” տեղեկատվական ՀԿ-ի  
Նախագահ Ինգա Ջարաֆյանին


Ձեր 06.08.2012թ. գրավոր հարցման վերաբերյալ

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը  
քննության է առել “Գեոթիմ” ՓԲԸ “ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի  
սահմանագիծին գտնվող Ամուլսարի ոսկեբեր թվաբցիտների հանքավայրի  
շահագործման” աշխատանքային նախագիծը:

Հանձնաժողովը արձանագրել է, որ նախագծում հանքավայրի լցակույտերը  
նախատեսվում է 2570-2360մ երկրի սահմաններում, 735 ք. ադետալի երկրաշարժի  
էպիկենտրոնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա 40-50մ բարձրությամբ 4  
շերտով շուրջ 100մ միջին բարձրությամբ m=1.0 շեպերի թեքությամբ, առանց  
միջանկյալ բեմանների: Նախագծում չկան շեպերի կայունությունը հիմնավորող  
հաշվարկներ՝ հաշվի առնելով տարածաշրջանի 10 բալ սեյսմիկ ուժգնությունը:

Բացի այդ՝ նախագծում լցակույտի համար նախատեսված իջույթի  
հիդրոերկրաբանական առանձնահատկությունների շեղումով դիտարկվում են  
գրունտային ջրերի բազմաթիվ ելքեր, որոնք լցակույտում պարունակվող վտանգավոր  
բաղադրիչները կտեղափոխեն Որոտանի գետահունը, այնուհետև Որոտան-Արփա-  
Սևան թունելով նաև Սևանա լիճ: Իջույթի սահմաններում զարգացած են ակտիվ  
սողանքային տեղամասեր, որոնց վրա լցակույտերի բեռնավորումը և հանքավայրում  
պայթեցման գործընթացները կարող են առավել ակտիվացնել սողանքային  
երևույթները, հատկապես զարևանային ամիսներին, իրենց անկանխատեսելի  
հետևանքներով:

Նախագծի Radman Associates հաստրում նշվում է, որ ռադոնի կոնցենտրացիան  
գերազանցում է 400 ԲԿ m-3 ներգործության մակարդակը, բայց “Շրջակա միջավայրի



## II. ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման հետևանքով հանրապետության տարածքի հազարավոր հեկտարներ ծածկված են լցակույտերով և թափոնների պոչամբարներով: Ըստ Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշռի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 2009 թ. կազմել են 29.36 հազ. հա, 2011 թ-ին՝ 33.0 հազ. հա, 2012 թ-ին՝ 33.6 հազ. հա, 2013 թ-ին՝ 34.9 հազ. հա, 2014 թ-ին՝ 36.4 հազ. հա, այսինքն՝ օգտագործվող հողատարածքների մակերեսն աստիճանաբար մեծանում է հատկապես ընդերքօգտագործման հողերի հաշվին: Առավել մտահոգիչ է բաց եղանակով հանքերի շահագործումը, որի արդյունքում շրջանառությունից հանվել են ավելի քան 7 հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողեր: (ՀՀ կառավարության 2015 թ. մայիսի 27-ի նիստի N 23 արձանագրային որոշման հավելված <http://www.irtek.am/views/act.aspx?aid=82696>):

2014 թվականի տվյալներով հանքավայրերի տարածքը շուրջ 8000 հա է, պոչամբարների տակ գտնվող հողերը կազմել են 1500 հա: Մետաղական հանքավայրերի շահագործման արդյունքում պոչամբարներում կուտակվել է մոտ 1,0 մլդ տննա թափոն:

## III. ՍՏՈՐԵՐԿՐՅԱ և ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԱՂՏՈՏՈՒՄ

Դեբեդ, Ախթալա, Շնող, Ողջի, Կարճևան, Արծվանիկ, Մասրիկ գետերը հանքարդյունաբերության ազդեցության կրողներն են և ունեն 5-րդ աստիճանի

ամենաբարձր աղտոտվածություն /Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ/:

Անդրսահմանային Արաքս գետ թափվող Կարճևան գետն աղտոտված է մոլիբդենով, մանգանով, ծարիրով, սուլֆատիոնով, ԿՆ-ով)/ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից աղտոտում/:

**Մասրիկ և Սոտք գետեր - Սոտքի ոսկու հանքավայր/:** Մասրիկ և Սոտք գետերի հատակի նստվածքը պարունակում է ծանր մետաղների մի ամբողջ փունջ՝ վանադիումի ամենաբարձր աղտոտվածությամբ, որի պրոֆիլն ամբողջովին արտացոլում է Սոտքի ոսկու հանքավայրում մետաղների պարունակման պրոֆիլը:

**Ողջի գետի ջրերի շարունակաբար աղտոտվում են** լքված Կապանի Կենտրոնական հանքավայրից թթվային դրենեժային ջրերով, Կապանի լեռնահարստացման կոմբինատի և Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի արդյունաբերական թափոններով և արտահոսքերով: Աղտոտիչներն են՝ մոլիբդենը, մանգանը, կոբալտը, կալիումը, ծարիրը:

**Արծվանիկ (Նորաշենիկ) գետը** կրում է ԶՊՄԿ-ի Արծվանիկի պոչամբարի ազդեցությունը, ամենաբարձր աղտոտվածությունը՝ մոլիբդեն, մանգան, կալիում, ծարիր, վանադիում, կոբալտ, երկաթ, ալյումին, սուլֆատ իոն, ԿՆ, ԹԿՊ5, նիտրիտ իոն, ալյումին:

**Դեբեդ գետը** կրում է Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի, Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի, Ալավերդու պղնձաձուլարանի ազդեցությունը, ամենաբարձր աղտոտվածությունը՝ մոլիբդեն, երկաթ, կախված նյութեր:

**Ախթալա գետը** կրում է Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի ազդեցությունը, ամենաբարձր աղտոտվածությունը՝ ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, սուլֆատիոն, կախված նյութեր:

**Շնող գետի** 1-ին կատեգորիայից դարձել է 5-րդ դասի աղտոտված գետ «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում, ամենաբարձր աղտոտվածությունը՝ մոլիբդեն, ԿՆ, պղինձ, կալցիում, նիտրիտ իոն, երկաթ, սուլֆատ իոն:

Ջրային ռեսուրսի մեջ արտադրական կեղտաջրերի արտանետման արգելքը ՀՀ ջրային օրենսգրքով սահմանվեց 2018թ-ին: 62.1 հոդվածի 1-ին կետով սահմանվեց. «Արգելվում է արտադրական կեղտաջրերի արտանետումը ջրային ռեսուրսի մեջ, եթե տվյալ կեղտաջրի քանակական և որակական չափանիշները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի հաստատած՝ թույլատրելի սահմանային արտահոսքի ընդհանուր և անհատական պահանջներին: Արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ ջրային ռեսուրս արտանետման դեպքում թույլատրելի սահմանային արտահոսքի ընդհանուր պահանջները, ինչպես նաև անհատական պահանջների տրամադրման կարգը եւ պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը»:

Օրենսգրքի փոփոխության այս կետը ուժի մեջ է մտնելու 2030 թվականին: (<http://parliament.am/legislation.php?sel=show&ID=6209&lang=arm>):

ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԳԻՏԱԿԱՆ

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝

1. Դարազամի պոչամբարի ջրահեռացման ջրանցքի (Քաջարան քաղաքի ծայրամասում) և հին հեռուստաաշտարակի մոտ հանքախորշից դուրս եկող առվի ջրերում առկա են մի շարք իոնների և սնդիկի բարձր պարունակություններ, առաջարկվում է այդ ջրերը չօգտագործել տնտեսական, ինչպես նաև կից գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման նպատակներով: Հետազոտված հանքային աղբյուրներից «Եսենտուկին» պարունակում է I և II դասի վտանգավորության տոքսիկ տարրերի նշանակալի պարունակություններ՝ մկնդեղ - (680,4 մկգ/լ, ՍԹԿ-ը (50մկգ/լ գերազանցում է 143,6 անգամ և սնդիկ - (23,4) 46,7 անգամ գերազանցում է ՍԹԿ-ն (0,5 մկգ/լ) այս ջուրը պետք է չօգտագործել խմելու նպատակներով: Առաջարկվում է փակել այդ աղբյուրը: Հետազոտված բոլոր նմուշներում հայտնաբերվել է պղինձ, մոլիբդեն, ցինկ մետաղների պարունակությունների գերազանցումներ: «Թթու ջուր» աղբյուրի ջրում պղնձի պարունակությունը ՍԹԿ-ի (1մկգ/լ) գերազանցում է 12,8 անգամ «Եսենտուկի» աղբյուրի ջրում ՍԹԿ-ն գերազանցում է 4 անգամ («Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2007):

Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի ջրի շրջանառու համակարգի չաշխատելու արդյունքում կոմբինատի թափոնաջրերը լցվում են Արաքս գետ: Գետում դիտվում է բարձր աղտոտվածություն: Վանադիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 10.2-11.3 անգամ: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԿՊ5-ի, ԹԲՊ, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, քրոմի, պղնձի, ալյումինի, մանգանի և սելենի ՍԹԿ-ները, ինչն արձանագրել է ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնը <https://www.ecolur.org/hy/news/mining/--/8306/> :

2. Կապան քաղաքի համար կատարված հետազոտությունների արդյունքում ոռոգման նպատակով տեղի բնակչության կողմից օգտագործվող հանքուղիների և արդյունաբերական ջրատարներում հայտնաբերվել են տոքսիկ կադմիում, սնդիկ մկնդեղ հանքային պղինձ և ցինկ տարրերի բարձր պարունակություններ: Բարաբաթում, Կավարտ գետի, ինչպես նաև Արծվանիկի պոչամբարի ջրերը գնահատվել են «վտանգավոր» և առաջարկվել դրանք չօգտագործել ոռոգման նպատակով: («Հանքարդյունաբերության պոչամբարների և Կապանի պղնձի կոմբինատի գործունեության ազդեցության գնահատումը Կապան քաղաքի շրջակա միջավայրի վրա», ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2007):

3--Արծվանիկ գետի ջրերում դիտվել է արսենի, քրոմի և մոլիբդենի պարունակության ավելացում: Արծվանիկ գետում 2008–2009 թթ. կուլտուր-կենցաղային ջրօգտագործման ՍԹԿ-ն (մգ/լ) գերազանցել է ալյումինի, երկաթի, պղնձի, մանգանի, մոլիբդենի (0,5), ցինկի, քրոմի, կադմիումի (0,005), վանադիումի և սելենի դեպքերում: Ստացված արդյունքներից երևում է նաև, որ ուսումնասիրված Մեղրիգետ և Ողջի գետերի ջրերը աղտոտված են ալյումինով և ծանր մեղաղներով «ՄԵՂՐԻ ԳԵՏ, ՈՂՋԻ ԵՎ ԱՐԾՎԱՆԻԿ ԳԵՏԵՐԻ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐՈՎ ԵՎ ԱԼՅՈՒՄԻՆՈՎ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ» հեղ.՝ Գ. Ա.

ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ա. Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Կ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ս. Հ. ՄԻՆԱՍՅԱՆ, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2011 <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/4-POLLUTION-LEVEL-OF-THE-MEGHRIGET-VOGHCHI-AND.pdf>:

4. Շնողի գետաբերանի ջրերի ջրածնային ցուցիչի արժեքները 2014-2015թթ. ընթացքում նվազել են: Հնարավոր բացատրություններից մեկը հանքավայրի շահագործման և դատարկ ապարների թափոնավայրերից արդեն աստիճանաբար սկսվում է թթվային դրենաժ և դրենաժի արգասիքների ներթափանցում Շնող գետի ջրերի մեջ: Թթվային դրենաժի մասին է վկայում նաև գետի ջրերում սուլֆատների և սելենի կոնցենտրացիաների աճը: Գետի գետաբերանի հատվածում 2014-2015թթ ընթացքում մի քանի անգամ դիտվել է 5-րդ «վատ» դասի աղտոտվածություն (5-րդ՝ «վատ» դասը ջրերի աղտոտվածության ամենաբարձր դասն է): Հասկանալի է, որ Շնող գետի գետաբերանում դիտվող 5-րդ՝ «վատ» դասի աղտոտվածությունը պայմանավորված է հատկապես մոլիբդենի բարձր պարունակությամբ... Շնող գետի ջրերի հիդրոքիմիական որակի վրա Թեղուտի հանքավայրի ազդեցությամբ: Մի շարք ցուցանիշների արժեքներ գետաբերանի ջրերում բազմակի գերազանցում են սկունքի՝ փաստացի ֆոնային, դիտակետի ջրերում դիտվող արժեքներին: Ընդ որում, այդ ցուցանիշները պղնձամոլիբդենային, պիրիտային հանքաարդյունահանման հետևանքով մակերևույթային ջրերն աղտոտող ցուցանիշներն են (սուլֆատ անիոն, Cu, Zn, As, Se, Mo, Cd, Sb, Pb, Fe, Mn և մի շարք այլ տարրեր) («Շնող գետի ջրերի որակի դինամիկան 2009-2015թթ. ընթացքում» Մեյրան Մինասյան ՀՀ ԳԱԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ, <http://www.armecofront.net/wp-content/uploads/2013/12/%D5%87%D5%B6%D5%B8%D5%B2-%D5%A3%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%BB%D6%80%D5%AB-%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%A4%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B4%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6-2009-2015%D5%A9%D5%A9%E2%80%A4-%D5%A8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%8D%D5%A5%D5%B5%D6%80%D5%A1%D5%B6-%D5%84%D5%AB%D5%B6%D5%A1%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%80%D5%80-%D4%B3%D4%B1-%D5%94%D5%AB%D5%B4%D5%AB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%86%D5%AB%D5%A6%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%AB%D5%B6%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%BF-.pdf>):

Չեխական «Արնիկա» քիմիական անվտանգության հասարակական կազմակերպության և Պրահայի քիմիական-տեխնոլոգիական համալսարանի մասնագետների կողմից 2018թ. իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Շնող գետի՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի պոչամբարից ներքև գտնվող հատվածի հատակի նստվածքից վերցված նմուշներում պղնձի և մոլիբդենի պարունակությունը համապատասխանաբար 6 և 17 անգամ ավելի բարձր է, քան պոչամբարից վերև գտնվող



գետի հասվածում: Աղտոտման աղբյուրը Թեղուտում հանքարդյունաբերական գործունեությունն է, ինչպես նաև Թեղուտի պոչամբարից արտահոսքերը:

Ախթալա գետի հունի նստվածքների նմուշներն ուսումնասիրված նմուշներից ամենաաղտոտվածներն են, որտեղ պղնձի խտությունը կազմում է 9500 մգ / կգ, ցինկինը՝ 4000 մգ / կգ, մոլիբդենինը՝ 90 մգ/կգ, մկնդեղինը՝ 55 մգ/կգ: Աղտոտվածության համար պատասխանատուն «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲԸ-ն է (“Heavy metals in the surroundings of mining and metallurgical sites in the Lori region in Armenia”, Author: Martin Bystrianský, Contributing authors: Marek Šír, Jitka Straková, Nikol Krejčová, <https://www.ecolur.org/files/uploads/armeniaheavymetalsajweb.pdf>) :

#### **IV. ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐ**

Ազնիվ և գունավոր մետաղների հանքանյութի հարստացման գործընթացում հանքանյութի զանգվածի 80-97%-ը թափոնների տեսքով հեռացվում են պոչամբարներ՝ մետաղների զգալի քանակություններով: Հանքավայրերի երկարատև շահագործման ընթացքում կուտակվում է միլիոնավոր տոննաներով արդյունաբերական թափոններ (“ПЕРВООЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ, СВЯЗАННЫЕ С ХВОСТОХРАНИЛИЩАМИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”, Р.С. МОВСЕСЯН\*, А.И. МОВСИСЯН\*, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2014, <https://ecolur.org/files/uploads/pdf/tailingdumps.pdf>): Հաշվի առնելով այն, որ ներկայումս ՀՀ-ում կիրառվում են հիմնականում հին տեխնոլոգիաներ, ավելի քան մտահոգիչ են դրանց հետևանքները: Հնարավոր երկրաշարժի ժամանակ բոլոր այդ տարածքները, շրջակա միջավայրի համար դառնում են լուրջ ռիսկային գոտիներ: Բոլոր խոշոր պոչամբարները, ըստ Համաշխարհային բանկի զեկույցի, Հայաստանում կառուցված են վերընթաց բարձրացման նախագծով, ինչը հակասում է սեյսմավտանգ գոտիներում նման պոչամբարների կառուցման միջազգային նորմերին: Երկրաշարժի ժամանակ նման մեթոդով կառուցված պոչամբարների փլուզման հավանականությունը մեծ է (<http://www.ecolur.org/files/uploads/armeniacassessment.pdf>):

Համաձայն առկա տվյալների՝ Հանրապետության պոչամբարներն ունեն 2-րդ և 3-րդ դասի՝ բարձր և չափավոր վտանգավորության կարգեր, որոնց վերականգնման համար կպահանջվի 10-30 տարի (“ПЕРВООЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ, СВЯЗАННЫЕ С ХВОСТОХРАНИЛИЩАМИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”, Р.С. МОВСЕСЯН\*, А.И. МОВСИСЯН\*, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2014, <https://ecolur.org/files/uploads/pdf/tailingdumps.pdf>):

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում հաշվում են թվով 23 պոչամբար: Փակ պոչամբարների մակերեսին պետք է ապահովվի 1 մետրանոց հողաշերտը, որ վտանգավոր նյութերը դուրս չգան պոչամբարի մակերես, այնուհետև մթնոլորտ:

#### **ՇՐՋԱՎԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Ըստ ԵՊՀ-ի գիտնականների հաշվարկի՝ պոչամբարների ընդհանուր մակերեսը կազմում է 1500 հա: Պոչամբարներում կուտակվել է մոտ 1 միլիարդ տոննա հանքարդյունաբերական թափոն և այդ քանակը տարեց տարի ավելանում է (“ПЕРВООЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ, СВЯЗАННЫЕ С ХВОСТОХРАНИЛИЩАМИ

РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ”, Р.С. МОВСЕСЯН\*, А.И. МОВСИСЯН\*, Երևանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2014, )։ Չնայած նրան, որ պոչամբարներում ջուրը ենթարկվում է երկարաժամկետ ինքնագտման, այնուամենայնիվ, արտահոսքի ջրերն իրենց մեջ պարունակում են ծանր մետաղների և վտանգավոր նյութերի սահմանային թույլատրելի նորմաները գերազանցող քանակություններ։ Աղտոտման աղբյուր են նաև պոչամբարների դրենաժային ջրերը, որոնք պոչամբարի պատերի կամ հատակային խոռոչների միջոցով աղտոտում են գրունտային ջրերը։ Պակաս վտանգավոր չեն պոչամբարների մակերեսից մթնոլորտային օդ արտանետվող վտանգավոր նյութերն և գազային խառնուրդները։

Շրջակա միջավայրի վրա պոչամբարների բացասական հետևանքներից է նաև վթարային իրավիճակների հավանականությունը, տեխնոգեն ջրերի բարձր ազդեցիվությունը և այլն։

2016թ. ընդունված ՀՀ հարկային օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ենթակետով վերջապես, ըստ վտանգավորության դասի, սահմանվեցին դրույքաչափեր ընդերքօգտագործման թափոնների համար՝ յուրաքանչյուր տոննայի համար 8-250 դրամ։

- Համաձայն օրենքի, այս հոդվածի կիրարկումը 2021թվականի հունվարի 1-ից է։ Այդ դեպքում ինչպես պետք է վարվել մինչ այդ միլիոնավոր տոննաներով կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալների հետ, օրենքը չի կանոնակարգում։

- 2021 թվականից հոդվածի կիրարկման համար չկան նոր առաջացող թափոնների արտահոսքի ծավալների ինչպես չափագրման, այնպես էլ նրանցում առկա վտանգավոր նյութերի պարունակությունների գնահատման բավարար մեխանիզմեր։

- Պարզված չեն նման դրույքաչափերի սահմանման բնապահպանական հիմնավորումները /Կուտակված ֆինանսական միջոցների քանակությունը կբավարարի արդյո՞ք վերականգնելու շրջակա միջավայրին պատճառված վնասները/

Չնայած նրան, որ փորձ է արվել կանոնակարգել դաշտը, այնուամենայնիվ, այն չի լուծել մինչև 2021թ. հունվարի 1-ը հանքարդյունահանման արդյունքում կուտակված միլիոնավոր տոննաներով թափոնների վնասագերծման, խախտված հողերի վերականգնման համար պահանջվող ֆինանսների հարցը։ Ամենազարմանալին այն է, որ նույն օրենսգրքով ոչ-մետաղական օգտակար հանածոների թափոնների համար սահմանված է 1950-62000 դրամ/տոննա, իսկ կենցաղային թափոնի համար՝ 600 դրամ/տոննա դրույքաչափեր։

Մինչ այժմ գործնականում չի գնահատվել որևէ պոչամբարի վտանգավորության դասը։ /2017թ. հունիսի 15-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը սահմանելու մասին» N 689-Ն որոշումը։ Որոշման համաձայն՝ թափոնների բաղադրիչների ցանկը և դրանց քանակական պարունակությունը հաստատվում են ըստ ելային հումքի բաղադրության և դրա վերամշակման տեխնոլոգիական պրոցեսների կամ քիմիական քանակական անալիզի արդյունքների։

Անհրաժեշտ է նշել, որ 2015թ-ին ընդունվել է «Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված և կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում գոյացած և

գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» ՀՀ օրենքը: Օրենքը նախատեսում է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում տեղադրված թափոնները պետք է դառնան Հայաստանի Հանրապետության սեփականություն: Պետությունը դրանք կհանձնի «Ալյոտիգ» ՍՊԸ-ին՝ պոչամբարների պարունակության վերամշակման համար, որ այդ նպատակով Սյունիքում կկառուցվի գործարան: Այդ նպատակով ընկերության համար սահմանվել են հարկային մի շարք արտոնություններ: Ի զարմանս, սակայն օրենքի ընդունումից մեկ տարի անց, ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.01.2016թ. վճռով պետական բյուջեի նկատմամբ ունեցած 13 436 261 ՀՀ դրամի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չկատարման հիմքով «ԱԼՅՈՏԻԳ» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ: Այսինքն սա այն եզակի դեպքն է, որ պետությունը փորձել է լուծել պոչամբարների հարցը, այն էլ ձախողվել է:

#### V. ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՈՏ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄՆՆԴԱՅԻՆ ՑԻԿԼԻ ԱՂՏՈՏՈՒՄ

Ծանր մետաղները կուտակվում են բույսերի հյուսվածքներում և կենդանիների օրգանիզմում, այդ ամենն էլ, սննդի տեսքով և օդի միջոցով կուտակվում է մարդկանց օրգանիզմում, որոնց պարբերաբար կուտակումը մարդկանց մոտ առաջացնում է առողջական լուրջ խնդիրներ (ոսկրային դեֆորմացիաներ, ուռուցքային հիվանդություններ և տարբեր այլ անբուժելի հիվանդություններ): Բացի դրանից տեղի բնակչության ցածր տեղեկացվածության պատճառով նրանք սկսել են պոչամբարի մակերեսին աճեցնել տարատեսակ գյուղատնտեսական կուլտուրաներ /Այունիք/ և դրանք օգտագործել իրենց սննդակարգում:

Մասնավորապես, հանքագործության և ձուլման աշխատանքներում առաջացած, ակտիվացած տարրերը՝ ծանր մետաղները, կապարը, մկնդեղը, ցինկը օդի, հողի և ջրի միջոցով փոխանցվելով մարդու և կենդանիների օրգանիզմ, առաջացնում են ծանր հետևանքներ: Կան բավարար ապացույցներ, որ կապարը քաղցկեղածին է մարդկանց համար (Թունավոր նյութերի և հիվանդությունների գրանցման գործակալություն (ATSDR), 2007թ.): Չկա կապարի անվնաս չափ մարդու օրգանիզմի համար, նույնիսկ ամենափոքր դոզան կարող է ազդել երեխայի հոգեբանաֆիզիոլոգիական զարգացման վրա: Անօրգանական մկնդեղի աղբյուր են պղինձ ու կապար պարունակող հանքաքարը և ձուլման աշխատանքները (Թունավոր նյութերի և հիվանդությունների գրանցման 5 գործակալություն (ATSDR), 2007ա): Ըստ քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալության տվյալների՝ անօրգանական մկնդեղը հայտնի քաղցկեղածին է (Քաղցկեղի հետազոտությունների միջազգային գործակալություն, 2012թ.):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Ախթալա համայնքից վերցրած բոլոր նմուշների 26,7%-ում կապարի պարունակությունը գերազանցում է ԱԹԿ-ն (400 մգ/կգ) 294 մգ/կգ միջին երկրաչափականով: Մկնդեղի վերաբերյալ նմուշների 93,6%-ում գերազանցում է ԱԹԿ-ն (12 մգ/կգ) 38 մգ/կգ միջին երկրաչափականով: Մկնդեղի

երկրաչափական միջինը 3,1 անգամ գերազանցում էր մկնդեղի առավելագույն թույլատրելի կոնցենտրացիան: Մկնդեղը գերազանցում էր ԱԹԿ-ն նմուշների ավելի քան 93%-ում հետազոտված բոլոր չորս շրջաններում: Ըստ նույն հետազոտությունների Ախթալայում ապրող երեխաների 84,6%-ի արյան մեջ կապարը գերազանցում է շիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների՝ ՀՎԿ-ների առաջարկած սահմանային մակարդակը 6,8 մգ/դլ երկրաչափական միջինով: Ալավերդիում ապրող երեխաների 75,4%-ի մոտ գերազանցում էր սահմանային արժեքը 6,4 մգ/դլ երկրաչափական միջինով (Իրավիճակը Հայաստանի Ախթալա քաղաքում. Հանքարդյունաբերության բնապահպանական եւ առողջապահական հետևանքները, Ռուզաննա Գրիգորյան, ՀԱՀ, 2015թ. ):

Քաջարան քաղաքում հետազոտված բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի մեջ առկա են հանքային տարրերի բարձր պարունակություններ և որ դրանցից որոշների օգտագործումը սննդակարգում վտանգավոր է: Դարազամի, Փխրուտ և Ողջի պոչամբարների տարածքում աճեցված բանջարանաբոստանային մշակաբույսերում կուտակված ծանր մետաղների պարունակությունները գերազանցում են ՍԹԿ-ի նորմաները («Քաջարան ք. Էկոլոգիական իրավիճակի հետազոտություն», ՀՀ ԳԱԱ Էկոլոգանտոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2005):

Ըստ հետազոտությունների արդյունքների՝ ՀՀ Լոռու մարզը հիվանդացությունների գումարային ցուցանիշներով հանրապետությունում գրավում է առաջին տեղը. ունի 9 բալ:

Ալավերդի. Ախթալա քաղաքների, Ճոճկան, Քարկոպ և Նեղոց համայնքների տարածքներում աճեցված գյուղմթերքներում սնդիկ հայտնաբերվել է մշակաբույսերի 5 նմուշներում՝ ՍԹԿ նորմերը գերազանցվել են 2,6-11,6 անգամ: Կաղմիում հայտնաբերվել է գյուղմթերքի բոլոր նմուշներում, չորս նմուշում գրանցվել են ՍԹԿ-ի գերազանցումներ: Նեղոց գյուղում ստացված ազնվամորու մեջ կաղմիումի պարունակությունը 131,9 անգամ գերազանցել է ՍԹԿ-ն: Մնացած գերազանցումները զգալիորեն ավելի ցածր են՝ 1,5-3,3 անգամ: Կապար հայտնաբերվել է բուսական բոլոր նմուշներում, այն գերազանցել է ՍԹԿ-ն: Ալավերդի քաղաքի շուկայից գնված խաղողի և նեխուրի համար արձանագրվել են կապարի ՍԹԿ-ի գերազանցումներ համապատասխանաբար 1,2 և 2,1 անգամ: Ցինկի պարունակությունները գյուղմթերքում նույնպես բավականին բարձր են և դեպքերի 94%-ում գերազանցել են ՍԹԿ: Առավելագույն գերազանցումը՝ 35,8 անգամ, գրանցվել է Նեղոց գյուղի ազնվամորու համար: Նիկելի պարունակությունները գյուղմթերքի բոլոր նմուշներում գերազանցել են ՍԹԿ-ն, որի ամենաբարձր արժեքը՝ ՍԹԿ 36,8 անգամ գերազանցմամբ, գրանցվել է Նեղոց գյուղի ազնվամորու համար: Գյուղմթերքի հետազոտված 17 նմուշներից տասի համար գրանցված են պղնձի պարունակության գերազանցումներ ՍԹԿ-ի նկատմամբ 1,2-2,4 անգամ: Հետազոտության ամենամտահոգիչ եզրակացությունն այն է, որ Ալավերդի քաղաքում և մոտակա գյուղերում (Նեղոց, Քարկոպ, Ճոճկան) ստացվող գյուղմթերքը չի համապատասխանում ՀՀ-ում և արտերկրում գործող սննդամթերքի անվտանգության նորմերին: Վտանգավոր գյուղմթերքը սպառվում է ոչ միայն արտադրողի կողմից, այլև թափանցում է տեղական շուկա, ինչը հանդիսանում է ռիսկի գործոն բնակչության առողջության համար («ՀՀ

գյուղմթերքի ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում», ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն, 2011):

ՀՀ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքում և նրա շրջակա բնակավայրերում ապրող երեխաների մազերում հայտնաբերել են մկնդեղ և այլ ծանր մետաղներ <https://www.ecolur.org/hy/news/sos/-/1404/> :

Մեղրիում, մինչև 30 տարեկան երիտասարդների մոտ կան առողջական լուրջ խնդիրներ: Դա բացատրվում է լեռնահանքաարդյունաբերության թունավոր արտանետման ազդեցությամբ: Դրանից ոչնչանում է ոչ միայն Մեղրիի շրջակա բնությունը, այլ ավելանում է այնպիսի հիվանդությունների քանակը, ինչպիսին են՝ թոքային հիվանդությունները, սրտի անբավարարվածությունը, արյան ճնշման տատանումները: Մեղրի գետում, լեռնահանքահանման կոմբինատների վնասակար թափոնների պատճառով գետում համարյա ամբողջությամբ անհետացել են ձկնային պաշարները <https://blognews.am/arm/news/413393/inchpes-en-anglo-saqser-y-talanum-hayastani-ynderqy%D6%89-och-hayastani-gaxutacmany.html>:

## VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Մետաղական հանքավայրերի շահագործման հետևանքով ազդակիր համայնքներում ծագած սոցիալական, առողջապահական և էկոլոգիական խնդիրներն ակտիվացրել են հասարակության որոշակի շերտերին, որոնք իրենց բողոքի ձայնն են բարձրացրել: Արդյունքում ծագում են սոցիալական կոնֆլիկտներ բնակչության տարբեր շերտերի, հանքարդյունահանող կազմակերպությունների, պետական և ՏԻՄ-երի, ինչպես նաև իրավապահ մարմինների միջև: Օրինակ՝

· Ամուլսարի շուրջ մեկ տարի է, ինչ Ջերմուկ խոշորացված համայնքի բնակիչները և հասարակական ակտիվիստները բողոքի շարունակական ակցիաներ են կազմակերպում ընդդեմ «Լիդիան Արմենիա» ընկերության գործունեության: Ընկերությունն իր հերթին բողոքող բնակչության և բնապահպանական հասարակական կազմակերպությունների նկատմամբ կիրառում է հակազդման հնարավոր բոլոր քայլերը՝ դատական հայցեր, մամուլի հրապարակումներ, սև փիարներ, տեղի բնակչության ընկերությունում աշխատանք ունեցող և բողոքող տեղացիների միջև կոնֆլիկտների հրահրում: Կոնֆլիկտները չխորացնելու համար ներգրավվել են հասարակական կարգի պահպանման ծառայությունները: Այդ լարվածությունը չի հանդարտվում:

· «Թեղուտ» ՓԲԸ նախկին աշխատակիցները՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի ազդեցության տակ գտնվող Շնող խոշորացված համայնքի բնակիչները՝ արդեն մի քանի անգամ փակում են դեպի «Թեղուտ» ՓԲԸ-ը տանող ճանապարհը՝ աշխատանք պահանջելով: Շնողի բնակիչները, ովքեր հանքի շահագործման համար կորցրել են իրենց համար եկամուտ ապահովող հողերը, կրում են հանքի անմիջական ազդեցությունը, այսօր նաև զրկվում են «Թեղուտ» ՓԲԸ-ում աշխատելու և իրենց ընտանիքներին պահելու հնարավորությունից: Բնակիչներին օտարված հողերի դիմաց անհամաչափ փոխհատուցման հիմքով Եվրոպական դատարաններում քննվող գործեր են ընթացել:

· ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի բնակիչները ստորագրահավաք են սկսել Լիճքի հանքավայրի և նոր հանքերի շահագործման դեմ: Պատրաստվել է ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանին ուղղված Հանրագիր: Լիճքի հանքավայրի շահագործման հարցը քննվում է ՀՀ վարչական դատարանում: Հայցվոր «Էկոլոգիական իրավունք» ՀԿ-ն պահանջում է առ ոչինչ ճանաչել Լիճքի պղնձի հանքավայրի շահագործումը թույլատրող փաստաթղթերը, քանի որ հանքավայրի մի մասը գտնվում է «Արևիք» ազգային պարկի տարածքում: <https://www.ecolur.org/hy/news/mining/-/10155/> :

· 2016թ. Սոթք համայնքն «Geopromining Gold» ընկերության կողմից վարձակալված հողերի դիմաց 68 միլիոն դրամ էր ստացել: Համայնքային խոշորացումից հետո՝ 2017թ. Սոտքն 17 այլ գյուղերի հետ ընդգրկվեց Գեղամասար համայնքի կազմում: Եվ այդ 68 միլիոն դրամը, ինչպես և հանքում աշխատատեղերը, տեղի բնակիչների ներկայացմամբ, նույնպես բաշխվել են մյուս գյուղերի միջև: Այդ ամենի արդյունքում ծագել են տարաձայնություններ և կոնֆլիկտներ գյուղերի բնակիչների միջև <https://www.ecolur.org/hy/news/mining/68-/11090/>: Նման իրավիճակ է նաև խոշորացած Կապանում, Ախթալայում: Օրինակները կարելի է շարունակել:

## VII. ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

1. ՇՄԱԳ փորձագիտական եզրակացությունը ներքին օգտագործման փաստաթուղթ է և ՀՀ «Իրավական ակտերի մասին օրենքի» համաձայն չի համարվում իրավական ակտ: Այն իմպերատիվ ուժ չունի, դրա պահանջների չպահպանումը չի առաջացնում իրավական հետևանքներ, և այն ենթակա չէ դատական կարգով վիճարկման:

2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում և ուղեցույցներում բացակայում են մի շարք կարևոր բաղադրիչներ, օրինակ՝ մարդու առողջության և կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման պատշաճ ուղեցույցները և մեթոդաբանությունները: ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ կարգավորվող ՇՄԱԳ-ի նախագծի վերաբերյալ Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը հստակ չի կարգավորում հանրային լուսման մասնակիցների թիվը, հնչած կարծիքների հետ հաշվի նստելու մեխանիզմները և դրանց արտացոլումը վերջնական որոշման մեջ:

3. Բացակայում է ընդերքից ապօրինաբար, կամ նախագծային շեղումներով արդյունահանված պաշարների արդյունքում պետությանը հասցված վնասների գնահատման մեթոդաբանությունը (օրենքի տեսքով):

4. Բացակայում է նախկինում պետական միջոցներով կառուցված պոչամբարների և դրանց նոր սեփանակատերերի միջև պարտավորությունների և պատասխանատվությունների բաշխումը կարգավորող իրավական ակտը:

5. Մշակված չեն հանքարդյունաբերության ոլորտում ՀՀ-ում կիրառելի լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները:

6. Սահմանված չեն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները:

### VIII. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հանքարդյունաբերության հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների գնահատականը կարող է լինել նաև բնապահպանական տեսչական ստուգումների արդյունքները: Այսպես՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում 2015թ. կատարված ստուգումներով հաշվարկվել է շրջակա միջավայրին 9,06 մլն. դրամ գումարի, նույն ընկերությունում՝ 2019թ. ստուգումներով՝ 382,43մլն. դրամ գումարի, 2015թ. ստուգումներով՝ Ագարակի ՊՄԿ-ում 3,477 մլն. դրամ գումարի, իսկ Ախթալայի ԼՀԿ-ում 10,083 մլն. դրամի, 2018թ՝. «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ում 378,69 մլն. դրամ, Ախթալայի ԼՀԿ-ն՝ 5,1 մլն. դրամի շրջակա միջավայրին պատճառված վնասների վերականգնման արձանագրություններ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2018թ. սեպտեմբերի 10-ից մինչև 2019թ. հունվարի 22-ը «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում կատարած ստուգման արդյունքում բացահայտվել են նաև հետևյալ խախտումները՝

- Հանքավայրի կոնդիցիաներն ու պաշարները չեն ենթարկվել վերագնահատման: Վերջին անգամ հանքավայրի պաշարները վերագնահատվել և հաստատվել են 2006 թվականին:
- Ընկերության կողմից չի վարվել օգտակար հանածոների պաշարների շարժի ամենօրյա գրանցամատյան:

- Լիազոր մարմնին ներկայացված 2017թ. հաշվետվություններում տեղ են գտել անհամապատասխանություններ՝ կապված մարված պաշարների հաշվառման հետ: 2017թ. հանքավայրի հաշվեկշռային պաշարներից փաստացի մարվել է 27,2մլն. տոննա հանքաքար, մինչդեռ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված է տարեկան 22,0մլն. տոննա:

Այս դեպքում արդյունահանման ծավալները գերազանցվել են 27%-ով, ինչը նախագծային շեղում է:

Կան փաստեր, որ բազմաթիվ ընկերություններ ամբողջությամբ փոխել են հանքավայրի շահագործման նախագծերը /օրինակ՝ «Վալլեքս»-ն 2014թ-ից սկսած չունի Հանքավայրի շահագործման 2-րդ փուլի համար ՇՄԱԳ փորձաքննության դրական եզրակացություն, «Լիդիան Արմենիա»-ի կողմից նախատեսվող Ամուլսարի հանքավայրի շահագործման շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեում դեռ 2018թ. հուլիսին հարուցվել է քրեական գործ՝ Ամուլսարի ծրագրի նախագծի փորձաքննության ժամանակ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց կողմից շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ: Օրինակները կարելի է շարունակել:

IX. Օգտվելով ամենաթողության մթնոլորտից մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություններն ու ընկերությունները շարունակաբար անտեսել են Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանվող՝ ընդերքօգտագործման ընթացքում բնության և շրջակա միջավայրի և ընդերքի պահպանության բոլոր պահանջները: Չեն պահպանել ստացած թույլտվությունների, լիցենզիաների, պայմանագրային պարտավորությունների պահանջները, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված

ռեսուրսների օգտագործման և բնապահպանական սահմանափակումները, չափաքանակները ու նորմերը, չեն կրել սոցիալական պատասխանատվություն:

X. ՀՀ տարբեր գերատեսչություններ տարիներ շարունակ իրենց գործողություններում թույլ են տվել հանցակազմ պարունակող պաշտոնեական անգործություն. չեն մշակել և ընդունել ոլորտում պետական ռազմավարությունն ու քաղաքականությունը, թույլտվությունների և լիցենզիաների տրամադրման գործընթացում թույլ են տվել գործող օրենսդրության խախտումներ, ինչպես նաև չեն կազմակերպել պատշաճ վերահսկողություն օրենսդրությամբ սահմանվող բնական ռեսուրսների օգտագործման և բնապահպանական սահմանափակումների, չափաքանակների, նորմերի պահպանման նկատմամբ:

Այսպիսով, կատարված վերլուծությունը հանգեցնում է նրան, որ հանքարդյունաբերության ոլորտում ստեղծված իրավիճակի համար մեղավոր և պատասխանատու են՝

### 1. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- հանքարդյունաբերության ոլորտում տնտեսական, սոցիալական, իրավաբանական, կրթադաստիարակչական, շրջակա միջավայրի պահպանման և պաշտպանության, երկրի տարածքում բնական պաշարների ռազմաօգտագործման, էկոլոգիական հավասարակշռության պահպանման համար սխալ քաղաքականության վարման համար
- հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականությունն ու ռազմավարությունը չմշակելու և չընդունելու համար
- պետական մարմինների կողմից հանք շահագործող ընկերությունների նկատմամբ վերահսկողության պատշաճ չկազմակերպման, մետաղական հանքավայրերի շահագործման տնտեսական շահավետության չհիմնավորման, բնապահպանական, սոցիալական կոնֆլիկտների չկանխարգելման համար
- մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպությունների կողմից իրականացվող փաստացի գործողությունների և լիցենզիաներին ու դրական եզրակացություն ստացած նախագծերի համապատասխանության նկատմամբ վերահսկողություն չկազմակերպելու համար
- ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողօգտագործման իրավունքի տրամադրման օրենսդրական հակասությունների չվերացման համար /գործող գործընթացը չի հենվում փոխհատուցման և տարաբնակեցման հարցերում հողի սեփականատերերի և հողօգտագործողների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային լավագույն փորձի վրա և այլն/
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով պահանջվող՝ մարդու առողջության և կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման ուղեցույցների և մեթոդաբանությունների չընդունման համար
- Բնապահպանական փորձաքննական եզրակացությանը իրավական ակտի կարգավիճակ սահմանող նորմատիվ իրավական ակտի չընդունման համար
- Ընդերքից ապօրինաբար, կամ նախագծային շեղումներով արդյունահանված



պաշարների արդյունքում պետությանը հասցված վնասների գնահատման մեթոդաբանության (օրենքի տեսքով) մասին օրենսդրական նախաձեռնությամբ հանդես չգալու համար

- Նախկինում պետական միջոցներով կառուցված պոչամբարների և դրանց նոր սեփանակատերերի միջև պարտավորությունների և պատասխանատվությունների բաշխումը կարգավորող իրավական ակտի բացակայության համար

- Միջազգային կոնվենցիաներով՝ մասնավորապես Օրհուսի կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունները և կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների խախտման առնչությամբ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի երկու որոշումների պահանջները՝ ա/ վերականգնել որոշումների կայացման գործընթացում հանրության լիարժեք մասնակցությունը և բ/ ապահովել դատարան դիմելու իրավունքը՝ շրջակա միջավայրին վերաբերող որոշումները վիճարկելու ցանկություն ունեցող հասարակական կազմակերպությունների համար դրույթների չսպահովման համար

- Իր որոշումներով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի կիրառումը տարիներ շարունակ սահմանափակելու և կասեցնելու համար, դրանով իսկ ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների բանական օգտագործման, մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության նկատմամբ վերահսկողություն չկազմակերպելու համար

- Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջների և չափանիշների չսահմանման համար:

## 2. ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը չիրականացման, բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի չպահպանման համար

- Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացման, մշակված հանքային տարածությունների չվերականգնման համար

- Արդյունաբերական թափոնների օգտագործման, օգտահանման, չեզոքացման, չնվազեցման աշխատանքների միջոցառումների չկատարման համար

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների չկատարման համար

- Բնության և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների չսպահովման համար

- Ապարաթթվային դրենաժների կանխարգելմանն ուղղված միջոցառումների չիրականացման համար

- Գործունեության արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչներին պատճառված վնասների չվերականգնման համար

- Իրենց գործունեության հանրային թափանցիկության չապահովման համար:

**3. ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՆԸ**

ա) Իր կազմում գործող ընդերքի տեսչության ու ոլորտային ծառայությունների միջոցով հանքարդյունահանող կազմակերպությունների գործունեության նկատմամբ ընդերքօգտագործման սահմանափակումների և նորմաների պահպանման նկատմամբ բավարար հսկողություն և վերահսկողություն չկազմակերպելու համար

բ) Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման գործընթացում ոլորտի կայունության բոլոր երեք՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական բաղադրիչների պահանջները չպահպանելու համար

գ) Ընդերքօգտագործման իրավունք ստացած կազմակերպությունների կողմից իրավունքի իրացման գործընթացներում թույլ տված խախտումների դեպքում իրավունքի հետկանչման մեխանիզմների չկիրառման համար:

**4. ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ա) Իր կազմում գործող բնապահպանական տեսչության ու ոլորտային ծառայությունների միջոցով հանքարդյունահանող կազմակերպությունների գործունեության նկատմամբ բնապահպանական նորմաների և սահմանափակումների նկատմամբ բավարար հսկողություն և վերահսկողություն չկազմակերպելու համար

բ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննական եզրակացության» փաստաթղթին իրավական ակտի կարգավիճակ, իմպերատիվ ուժ և կիրառելի դարձնելուն միտված օրենսդրական նախաձեռնություն չցուցաբերելու համար

գ) ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ ՇՄԱԳ-ի նախագծի վերաբերյալ Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգում հանրային լսումների մասնակիցների թվի, հնչած կարծիքների հետ հաշվի նստելու մեխանիզմների և վերջնական որոշման մեջ դրանց արտացոլման ակնհայտ անորոշությունների հանգամանքներն անտեսելու և դրա կարգավորմանն ուղղված օրենսդրական նախաձեռնության չցուցաբերման համար

դ) Կենսաբազմազանության վրա հանքարդյունաբերության հետևանքների ազդեցության գնահատման պատշաճ ուղեցույցներ և մեթոդաբանություններ չմշակելու համար

ե) Օրենքով սահմանված՝ հանքարդյունաբերության ոլորտում ՀՀ-ում կիրառելի լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչների չմշակման համար

զ) Հանքարդյունահանման գործունեության ընթացքում բնապահպանական խախտումներ կատարած, կամ պայմանագրային պարտավորությունները չկատարող կազմակերպությունների նկատմամբ օրենքով սահմանված կարգով թույլտվությունների չեղարկման կամ լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդագրերի ներկայացման մեխանիզմների չկիրառման համար:

**5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԵՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

- Օրենքով վերապահված լիազորության՝ պոչամբարների տեխնիկական անվտանգություն վերահսկողությունը չապահովելու համար:

#### 6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Բնակչության առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության մոնիտորինգ չանցկացրելու համար

բ) Ելակետային տվյալների բազան ապահովելու նպատակով բնակչության առողջապահական հետազոտություններ չկատարելու համար

գ) Մարդու առողջության վրա հանքարդյունաբերության հետևանքների ազդեցության գնահատման պատշաճ ուղեցույցներ և մեթոդաբանություններ չմշակելու համար:

#### 7. ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

- Հողերի և մշակաբույսերի աղտոտվածության նկատմամբ պատշաճ վերահսկողության չկազմակերպման համար

- Իր ենթակայության տակ գտնվող անտառային տարածքները ընդերքօգտագործման նպատակով տրամադրման նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար:

#### 8. ՊԵՏԱԿԱՆ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- Բնապահպանության և ընդերքի ոլորտներում պետության կողմից պատվիրակված լիազորությունների ոչ պատշաճ կերպով իրականացման համար:

#### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՒՆԱՎՈՐ, ՀԱԶՎԱՂԵՊ և ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿՈՐՄՏԻ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության էքստենսիվ զարգացման, նոր տեխնոլոգիաների չներդրման, օգտակար հանածոների արդյունահանման էժան տեխնոլոգիաների շարունակական կիրառման արդյունքում հազվագյուտ և ցրված մեծ քանակությամբ էլեմենտների չկորզման և հանքանյութերի մշակման ամբողջական ցիկլի չապահովման հետևանքով Հայաստանի Հանրապետությունը կրում է միլիարդավոր դոլլարների կորուստ: Երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Ավագյանն իր հեղինակած «Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» աշխատության մեջ (2011թ-ին է հրատարակվել) անդրադարձել է այս խնդրին:

Մեջբերումներ աշխատությունից:

#### **Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայր**

«Քաջարանի հանքավայրի հանքաքարերում հիմնական պղինձ և մոլիբդեն մետաղներից բացի առկա են նաև մի շարք հազվագյուտ և թանկարժեք տարրեր՝ ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, տելուր, բիսմութ, վանադիում, տիտան, երկաթ, սկանդիում, պլատինոիդների խմբի մետաղներ՝ հատկապես պլատին և պալադիում (չնչին քանակներով նաև ռուտենիում, ռոդիում, օսմիում, իրիդիում և նույնիսկ ռադիոգեն օսմիում):

Նշվածներին ի հավելումն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի քիմիական լաբորատորիայի անալիզներով Քաջարանի հանքաքարի խտանյութերում հայտնաբերվել են մկնդեղ, մագնեզիում, նիկել, կոբալտ, կապար և ցինկ: Վերը նշված տարրերից ոսկին, արծաթը, ռենիումը, սելենը, տելուրը, բիսմուտը, երկաթը (պղնձի խալկոպիրիտ և ծծմբի հրաքարի պիրիտ հանքանյութերի ձևով), ինչպես նաև վերջինիս հետ կապված ծծումբը և մկնդեղը, մագնեզիումը, նիկելը, կոբալտը, կապարը և ցինկը, բոլորն էլ անցնում են խտանյութեր, սակայն, ինչպես ընդհանրապես ընդունված է, խտանյութերի վաճառքի ժամանակ դրանք չեն գնահատվում և չեն փոխհատուցվում, բացառությամբ պղնձի խտանյութ անցնող ոսկու մի մասի (n՝ր մասի, մեզ հայտնի չէ, ասում են՝ դա «կոմերցիոն գաղտնիք է»)» (էջ 39):

Հրաչյա Ավագյանի տեսական և մոտավոր հաշվարկներով 2007թ-ին թողարկված արտադրանքի վաճառքից Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ստացած հասույթը, կազմել է 165 միլիոն 180,7 հազ. դոլլար (էջ 39), մինչդեռ հանքահարստացման գործընթացում նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հանքաքարում առկա բոլոր տարրերի առավելագույն կորզման և դրանց մի մասի գերզտված վիճակով միջազգային շուկայում վաճառելու դեպքում, ըստ Հրաչյա Ավագյանի հաշվարկների, ԶՊՄԿ-ի հասույթը 9 միլիոն տոննա հանքաքարի արդյունահանման պայմաններում կարող էր կազմել 505 միլիոն 422,2 հազար դոլլար, որից շահույթը՝ 202 միլիոն 977,5 հազար դոլլար: Անդրադառնալով թերկորզման արդյունքում ԶՊՄԿ-ի պոչամբարներում 1951-2009թթ. ընթացքում կուտակված մետաղների խնդրին՝ Հրաչյա Ավագյանը գրել է. «Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման այս ամբողջ ժամանակահատվածում (1951թ. մինչև 2009թ. ) դրա ընդերքից արդյունահանվել և մշակվել է 318,2 միլիոն տ հանքաքար, ...որոնցից հանքահարստացման գործընթացներում թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված տարրերի քանակը կազմել է. պղնձինը՝ 222747 տ, մոլիբդենինը՝ 26194,6տ, ռենիումինը՝ 23.995տ, ոսկունը՝ 2805,6 կգ, արծաթինը՝ 306,3 տ, սելենինը՝ 43 տ, տելուրինը՝ 313,78տ, բիսմուտինը՝ 296,44 տ, նիկելինը՝ 117,6 տ, կոբալտինը՝ 44,1 տ, կապարինը՝ 2905,8 տ, ցինկինը՝ 2575 տ...Հաշվարկները ցույց են տալիս, որ անցած 58 տարիների ընթացքում (1951թ. մինչև 2009թ.) Քաջարանի հանքավայրի ընդերքից արդյունահանված և մշակված 318,2 միլիոն տ հանքաքարերից օգտակար տարրերի թերկորզման հետևանքով պոչամբարներ թափված հարստությունների արժեքը կազմում է 9 միլիարդ 976,6 միլիոն դոլլար (մեկ տարվա ընթացքում պոչամբարներ թափված հարստությունների միջին արժեքը կազմում է 172,01 մլն դոլլար)» (էջ 47):

### **Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայր**

«Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրի B+C<sub>1</sub>+C<sub>2</sub> կատեգորիաների հանքաքարերի արդյունաբերական (հաշվեկշռային) պաշարների մնացորդը առ 1-ը հունվարի 2010թ. դրությամբ կազմում է 156170 հազ.տ, իսկ օգտակար տարրերինը՝ պղինձը՝ 584000տ, մոլիբդենինը՝ 14983տ, ռենիումինը՝ 30,33 տ, ոսկունը՝ 3176,7 կգ, արծաթինը՝ 148,9տ, սելենինը՝ 414,1տ, տելուրինը՝ 71,0տ, բիսմուտինը՝ 248,3տ, գերմանիումինը՝ 11,1տ, ծծմբինը՝ 1708000 տ, երկաթինը՝ 1468800տ (էջ 57)»:

1963թ. մինչև 2010թ. Ագարակի հանքավայրի ընդերքից արդյունահանվել և մշակվել է 100121,2 հազար տ չոր հանքաքար, որի մեջ պարունակվել են. պղինձ՝ 434225.6տ, մոլիբդեն՝ 25.430.225 .78 տ, ոսկի՝ 2397.9 կգ, արծաթ՝ 112,77տ, ռենիում՝ 21,426տ, սելեն՝ 284,84 տ, տելուր՝ 48,76տ, բիսմուտ՝ 170,48 տ, գերմանիում՝ 8,26տ, ծծումբ՝ 1.051.273տ, երկաթ՝ 915,108.0տ (էջ 66):

Կոմբինատում ստացել են պղնձի և մոլիբդենի խտանյութեր, որոնցում առկա ցրված և հազվագյուտ տարրերը չեն գնահատվում և դրանց արժեքները չեն վճարվում»:

Ինչ վերաբերում է Ագարակի կոմբինատի 3 պոչամբարներում կուտակված մետաղներին և արժեքավոր տարրերին, ապա, ըստ աշխատության, 1963-2009թ-ի ընթացքում պոչամբարներում կուտակվել է 2 միլիարդ 256 միլիոն դոլարի հարստություն՝ պղինձ, մոլիբդեն, ոսկի, արծաթ, ռենիում, սելեն, տելուր, բիսմուտ, գերմանիում, ծծումբ, երկաթ՝ ըստ 2007թ. մարտ-ապրիլ ամիսներին և 2008թ. մայիսին Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նախօրյակին միջազգային շուկայում օգտակար տարրերի ունեցած գների:

«Ագարակի պոչամբարները կարելի է դիտարկել որպես ձեռակերտ (մարդկային զործունեության հետևանքով գոյացած) հանքավայր, որի ընդերքում առկա են այլ տարրերի հետ համատեղ բավականին մեծաքանակ (201,6տ) խիստ թունավոր (նույնիսկ միացությունների տեսքով) տարրեր՝ սելեն և տելուր: Վերջիններս, ինչպես նաև հանքաքարերում չնկարագրված մկնդեղը, թունավոր ու խիստ վտանգավոր են, եթե դրանք մնան պոչամբարներում, բայց դրանք կարող են դառնալ օգտակար, եթե կորզվեն» (էջ 68):

#### **Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայր**

«ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից Թեղուտի հանքավայրում հաստատված պաշարները կազմում են.

- Հանքաքարերի B+C<sub>1</sub> կատեգորիաների պաշարները՝ 453,796 մլն. տ, C<sub>2</sub> կատեգորիայինը՝ 5,448 մլն տ
- Պղնձի B+C<sub>1</sub> կատեգորիաների պաշարները 1609,7 հազ. տ, C<sub>2</sub> կատեգորիայինը՝ 20,5 հազ. տ
- մոլիբդենի B+C<sub>1</sub> կատեգորիայինը՝ 97,9432 հազ. տ, C<sub>2</sub> կատեգորիայինը՝ 1,1736 հազ. տ
- ծծմբինը՝ B+C<sub>1</sub> կատեգորիաներինը՝ 16833,6 հազ. տ, C<sub>2</sub> կատեգորիայինը՝ 187,9 հազ. տ
- ոսկու՝ C<sub>2</sub> կատեգորիայի պաշարները կազմում են 4776,2կգ, պարունակությունը՝ 0,6գ/տ (ոսկու 7,96 մլն տ հանքաքարերում)
- արծաթի՝ C<sub>2</sub> կատեգորիայի պաշարները՝ 303,8կգ, պարունակությունը՝ 31,7գ/տ (արծաթի 9,5836 մլն տ հանքաքարերում)

Գ. Փիջյանի տվյալների հիման վրա մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ B+C<sub>1</sub>+C<sub>2</sub> կատեգորիաների մոլիբդենի պաշարների մեջ ռենիում հարակից տարրի պաշարները (գնահատենք այն C<sub>2</sub> կատեգորիայի թե՛ որպես ռեսուրս) կարող են կազմել 120,71տ (էջ 99):

...ձեռնարկության կողմից 2008թ. ՀՀ Պաշարների պետական հանձնաժողովին ներկայացված Թեղուտի հանքավայրի պաշարների հաշվարկում ներառված է շահագործման բացահանքի առաջին հերթի սահմաններում ամփոփված պղնձի և մոլիբդենի պաշարները և ուրիշ ոչինչ: Այստեղ ներառված չեն նույնիսկ այն տարրերը, որոնք հաստատված են ԽՍՀՄ-ի ՊՊՀ-ի կողմից՝ ոսկին, արծաթը և ծծումբը:

Մեր կարծիքով, դա չի արվել միտումնավոր, որպեսզի տեսանելի չդառնա, թե որքան արժեքավոր տարրեր են թափվելու կամ օտարներին նվիրվելու խտանյութերի վաճառքի ժամանակ (մոլիբդենի խտանյութերի վաճառքի ժամանակ չի գնահատվում և չի փոխհատուցվում մոլիբդենի հետ սերտորեն կապված շատ արժեքավոր՝ մոլիբդենից 125 անգամ թանկ ռենիումը, իսկ պղնձի խտանյութերի վաճառքի պարագայում արծաթը, սելենը, տելուրը, բիսմուտը և այլն) և որքան թունավոր տարրեր են թափվելու պոչամբարներ (սելենը, տելուրը, մկնդեղը խիստ թունավոր տարրեր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով) ու թունավորելու միջավայրը (էջ 101):

«Թեղուտի հանքավայրի հիմնական՝ պղինձ և մոլիբդեն տարրերի, որոնք ծրագրվում են կորզելու, արժեքներն ընդերքում (18334,5 մլն դոլլար) և պոչամբարներ թափվող պիրիտ հանքանյութի մեջ առկա տարրերի ընդհանուր արժեքները (14027,37 մլն դոլլար) համարյա համարժեք են միմյանց: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ պիրիտ հանքանյութի մեջ սպասվում են նաև շատ այլ արժեքավոր տարրերի (ոսկու, արծաթի, գալիումի, գերմանիումի, ինդիումի, թալիումի և այլնի) կորզելի քանակներ, ապա կտեսնենք, որ այդ արժեքավոր հանքանյութը պոչամբարներ թափելն ուղղակի կրկնակի հանցագործություն է» (էջ 105):

#### **Ոսկու հանքավայրերի ոսկու կորուստ**

«Ֆ. Շամցյանը (Геолого-промышленные типы золоторудных месторождений Малого Кавказа. Дисс. на соискание ученой степени доктора геологических наук по специальности 24.00.06, Ереван, 2002) նշում է... Սուտքի հանքավայրում երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում դուրս է թափվել 1,5 տ ոսկի, որից միայն մի աննշան մասն է օգտագործվել Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում, իսկ Մեղրաձորի թափոնակույտերում երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում կուտակվել է 500 կգ ոսկի, որը չի օգտագործվել և մնացել է թափոնակույտերում: Նույնպիսի հաշվարկներով հիմնավորվել է, որ Ազատեկի հանքավայրում կորստի է մատնվել 300-350կգ ոսկի, 6-7 տ արծաթ և բավականին այլ տարրեր: Շահումյանի հանքավայրում կորստի է մատնվել 200 կգ ոսկի, 4տ արծաթ և դրանց հետ հարակից այլ տարրեր՝ պղինձ, ցինկ, կապար, սելեն, տելուր, բիսմուտ և այլն:

Զգալի կորուստներ են տեղի ունեցել ոսկու հանքավայրերի շահագործման՝ հանքաքարերի արդյունահանման և ոսկու կորզման գործընթացներում: Այսպես, օրինակ, Ֆ. Շամցյանի տվյալներով Սուտքի հանքավայրի թիվ 4 և 39 հանքային մարմինների վեց շահագործական զանգվածներում Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարները շահագործված (արդյունահանված ) պաշարներին գերազանցել են մոտ 17% (մենք կասեինք հակառակը՝ արդյունահանված պաշարները 17 տոկոսով պակաս են եղել հաստատված պաշարներից), որի բացատրությունը Շամցյանը գտնում է ոսկու պարունակության պակասով՝ մոտ 12,3 % (մենք այլ կարծիքի ենք):

Հանքաքարերում ոսկու պարունակության միտումնավոր նվազեցման պատճառով «կորստի» է մատնվել մոտ 1070 կգ ոսկի:

«...«ոսկու հիմնական կորուստը, այնուամենայնիվ» տեղի է ունեցել ոչ թե արդյունահանման, այլ հանքաքարերի վերամշակման ժամանակ»: Ոսկու կորզումը հանքաքարերից միջին հաշվով կազմել է 70-75%, երբեմն էլ ավելի պակաս: Դա նշանակում է, որ մեծ ծախսերի գնով արդյունահանված հանքաքարից թափոնակույտեր են թափվել ոսկու 20-25 %-ը այն դեպքում, երբ մշակված տեխնոլոգիաների համաձայն՝ ոսկու կորզումը Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում պետք է կազմեր օբսիդացված հանքանյութերից՝ 92,5%, խառը հանքանյութերից՝ 90,6%, իսկ սուլֆիդային հանքանյութերից՝ 95,9-96,5%»: (էջ 227)

### **Ամուլսարի ոսկու հանքավայրը**

«Այսպես է անվանվել Կաքավասարի ոսկի-բազմամետաղային հանքերակման վերին հորիզոնի տեղամասը...Ոսկին այս տեղամասում ներկայացված է ցրված և աղքատ հանքայնացման տեսքով...

Այս «հանքավայրը» հետախուզվել է, և 2010թ. դրա պաշարները հաստատվել են ՀՀ Պաշարների գործակալության կողմից, ընդ որում, «հանքավայրը» համարվել է զուտ ոսկեբեր ու հաստատվել են միայն ու միայն ոսկու պաշարները...»(էջ 257):

«Ամուլսարի ոսկու «հանքավայրում» ոսկու հետ հարակից տարածված են արծաթ, մկնդեղ, բերիլիում, բիսմուտ (քիչ քանակությամբ), կադմիում, կոբալտ, քրոմ, պղինձ, երկաթ (հիմնականում պիրիտհանքանյութի հետ կապված)տիտան, ուրան (ցածր պարունակությամբ) վանադիում, ցինկ և սնդիկ: Նշված մետաղների գերակշիռ մեծամասնությունը պատկանում է ծանր մետաղների թվին, հետևապես դրանք, ինչպես նաև թունահարույց հատկություններով օժտված տարրերը՝ մկնդեղն ու բերիլիումը, խիստ վտանգավոր են մարդու օրգանիզմի համար»: (էջ 260)

### **Իրավական հիմնավորումներ**

ՀՀ կառավարություն

2011թ. ընդունված Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի հոդված 15-ով սահմանված ՀՀ կառավարության իրավասություններից առ այսօր չեն կատարվել՝ հոդվածի 2-րդ մասով պահանջվող հետևյալ կետերի պահանջները.

1) ընդերքօգտագործման քաղաքականության որոշումն ու իրականացումը, 4) ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի հաստատումը. 10) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգի սահմանումը՝/ընդունվել է 2017թ./,

14) ընդերքօգտագործողների և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը՝ քաղաքացիների իրավունքները հիմնականում ստորադասվել են ընդերքօգտագործողների իրավունքներին;

17) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջների և չափանիշների սահմանումը՝ մինչ այժմ չի սահմանվել: 20) լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչների սահմանումը՝ մինչ այժմ չի սահմանվել:

### **7. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստեր**

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները հետևյալն են.

- Հայաստանի Հանրապետությունում տրված է 417 հանքավայրի արդյունահանման իրավունք, որոնցից 27-ը մետաղական են: 45 հանքավայր գտնվում է ուսումնասիրման փուլում, որոնցից 24-ը կրկին մետաղական են: Հայաստանի կառավարությունը տվել է նաև 7 մարզերի տարածքում նավթի և գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար 3 արտոնագիր:
- Այս հանքերի գործունեության արդյունքում ունենք մոտ 1 միլիարդ տոննա պոչանքներով լցված 23 գործող և կոնսերվացված պոչամբար, որոնց մակերեսը կազմում է 1500 հա: Պոչամբարի և բաց հանքերի կողմից շրջակա միջավայրի աղտոտումը 1-ը 10-ի հարաբերակցությամբ է, հետևաբար պոչամբարներն արդեն իսկ աղտոտել են 15000 հա տարածք: Հանքավայրերի տարածքը շուրջ 8000 հա է, հետևաբար մենք արդեն իսկ ունենք 80 000 հազար հա աղտոտված տարածք բաց հանքերի պատճառով:
- Պոչամբարները ճանաչվել են տեխնածին հանքեր և ընկերությունները՝ բարձր վտանգավորության դասի թափոնների տեղադրման համար գումար չեն վճարում:
- Պոչամբարները չեն ռեկուլտիվացվում, արդյունքում այդ պոչամբարների հետագա վնասագերծման, ռեկուլտիվացիայի բեռը մնում է Կառավարության վրա: Լքված պոչամբարները, առանց վերահսկողության, շարունակում են աղտոտել շրջակա միջավայրը և որևէ մեկը դրա համար պատասպանատվություն չի կրում, օրինակ, Թուխմանուկի, Դաստակերտի և այլ պոչամբարները:
- Պոչամբարները և տարրավացման հարթակները տեղակայված են բարձր սեյսմիկության գոտիներում և ջրհավաք ավազաններում: Այդպիսին են Թեղուտի, Նահատակի, Գեղանուշի, Արարատի պոչամբարները, Ամուլսարի տարրավացման հարթակը և դրանք ունեն առաջին դասի վտանգավորություն:
- Հաճախակի են հանքերում տեխնոլոգիական վթարները, որոնք լուրջ վտանգ են մարդու առողջության, բնակավայրերի և շրջակա միջավայրի վրա: Օրինակ, 2015-2016թթ. Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչատարը վթարվել է 13 անգամ, վթարվել են նաև «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի, Կապանի լեռնահարստացման կոմբինատի, Թուխմանուկի, Թեղուտի պոչատարները:
- Հանքարդյունահանության արդյունքում աղտոտվում է Հայաստանի ջրային ավազանը: Մասնավորապես, աղտոտվում են Արարատի և Թեղուտի ստորգետնյա ջրավազանները, Սյունիքի մարզի 12 գետ ու վտակ՝ Որոտանի գետավազանի Միսիան գետի Կիշկոշտ և Այրիգետ վտակները, Ողջիի գետավազանում՝ Ողջի գետն ու Գեղի, Արծվանիկ, Նորաշենիկ, Կավարտ, Գեղանուշ վտակները,



Մեղրիգետի գետավազանում՝ Մեղրիգետ, Կարճևան գետերը և դրանց համապատասխանաբար՝ Խաչիձոր ու Ագարակ վտակները, ինչպես նաև Շնող, Ախթալա, Մասրիկ եւ Սոտք գետերը, որոնք 1-ին դասի /խամելու ջուր/ գետից վերածվել են ամենավատ՝ 5-րդ դասի գետերի, որոնց ջրով արգելվում է օգտագործել նույնիսկ ոռոգման համար: Ամուլսարի ծրագրի իրականացմամբ վտանգի տակ է Արփա և Որոտան գետերը, Կեչուտի և Սպանդանյանի ջրամբարները և Սևանա լիճը:

- Փորձաքննության ընթացքում անտեսվում են «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի պահանջները և Օրենքի խախտմամբ տրվում են փորձաքննական դրական եզրակացություններ Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքարդյունահանության համար: Մասնավորապես, Սևանա լճի ջրհավաք ավազանում են գտնվում Սոտքի, Ամուլսարի հանքավայրերը:
- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի և չեխական Արնիկա կազմակերպության ուսումնասիրությունների համաձայն, Սյունիքի և Լոռու մարզերի հանքարդյունաբերական շրջաններում աճած բույսերը և արտադրված գյուղմթերքը համարվել են չափազանց վտանգավոր օգտագործման համար: Ծանր մետաղներ, ռադիոակտիվ և թունավոր նյութեր են հայտնաբերվել նաև դպրոցների ու մանկապարտեզների բակերի հողում, ձվի դեղնուցում, երեխաների մազերում:
- Հանքերի զգալի՝ բնապահպանական, տնտեսական և մարդու առողջությանը պատճառված վնասի համեմատությամբ աննշան է հանքարդյունաբերության տնտեսական արդյունավերությունը: Ազգային վիճակագրության ծառայության 2007-2016թթ. միջինացված տվյալների համաձայն, հանքարդյունաբերության ոլորտում աշխատում է մոտ 10000 մարդ, ինչը կազմում է երկրի բնակչության զբաղվածության ընդամենը 0,9 տոկոսը, իսկ մետաղական հանքերի մասնաբաժինը մեր ՀՆԱ-ում ընդամենը 2,8 տոկոս է, այն էլ ստացվող արդյունքի մոտ 95%-ը ապահովվում է 5-6 խոշոր և արդեն մի քանի տասնամյակ շահագործվող հանքավայրերի շնորհիվ:
- Բազմաթիվ հանքարդյունահանող ընկերություններ տարիներ շարունակ չեն վճարում աշխատողների աշտավարձը, խուսափում են հարկերի և պարտադիր սոց. վճարների վճարումից: Այսպես, «Գլոբալ Գոլդ Մայնինգ», «Մեգո Գոլդ», «Մարջան», «Հանքավան մայնինգ» և «Գետիկ Մայնինգ» ընկերությունները 2008թ.-ից ի վեր աշխատավարձ չեն վճարել իրենց աշխատողներին, որոնք ստիպված դիմել են դատարան, սակայն դատարանների վճիռները մինչ օրս չեն կատարվում, տարիներ շարունակ չեն վճարել հարկեր և սոցվճարներ, արդյունքում «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել, իսկ մյուս ընկերությունները չունեն գույք և դրամական միջոցներ:
- ՀՀ առողջապահության նախարարությունը չի իրականացնում հանքերի սանիտարահամաճարագային փորձաքննություն, որպեսզի կանխի մարդու առողջության վրա հանքերի բացասական ազդեցությունը:

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պատշաճ չի իրականացնում տեխնիկական փորձաքննություն և հաշվի չի առնում հանքերի և պոչամբարների տեղանքի սեյսմիկությունը, պոչամբարների տարողունակությունը, պոչամբարների մեկուսացումը ստորգետնյա ջրավազանից և պատվարների բարձությունն ու ամրությունը /Թեղուտ, Նահատակ, Թուխմանուկ/, թթվային դրենաժի առակայությունը և ազդեցությունը տարածքում գտնվող թունեղների և ջրամբարների պատվարների /օր. Ամուլսարի ազդեցությունը Որոտան-Արփա-Սևան թունեղների և Կեչուտի ու Սպանդարյանի ջրամբարների պատվարների/ վրա:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը չի իրականացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն, այլ գնահատում է ձեռնարկողի ներկայացրած ՇՄԱԳ-ը, ինչը հիմնականում կազմված է լինում ոչ պատշաճ և պարունակում շրջակա միջավայրի վրա ազդեցության իմաստով՝ թերի և կեղծ տեղեկություններ:
- ՀՀ բնապահպանության նախարարությունը (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) չի իրականացնում շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցության գնահատում և փորձաքննություն /օր. Թեղուտ, Ամուլսար/ Էսպոտի կոնվենցիայի համաձայն, արդյունքում կարող են առաջանալ Հայաստանի համար լուրջ պարտավորություններ միջազգային նորմերի համաձայն:
- ՀՀ բնապահպանության նախարարությունը (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) ուժը կորցրած չի ճանաչում փորձաքննական եզրակացությունները, երբ ընկերությունները հանքարդյունահանություն են իրականացնում նախագծային շեղումներով /ԶՂՄԿ, «Թեղուտ» ՓԲԸ/, մեկ տարվա ընթացքում հանքարդյունահանում չեն իրականացնում /Թեղուտ, Ամուլսար/ կամ, երբ ի հայտ են գալիս նոր գործոններ, որոնք չեն գնահատվել փորձաքննության ընթացքում /Ամուլսար/, արդյունքում ՀՀ կառավարությունը կանգնում է լուրջ խնդիրների առաջ:
- ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների և միջազգային նորմերի խախտմամբ ՀՀ կառավարությունը բացառիկ՝ գերակա հանրային շահ է ճանաչել և փոխել գյուղատնտեսական և անտառային արժեքավոր հողերի նպատակային նշանակությունը՝ տրամադրելով դրանք հանքարդյունահանության համար: Արդյունքում խախտվել է բազմաթիվ քաղաքացիների սեփականության իրավունքը, և ՄԻԵԴ-ի վճիռներով Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է վճարել քաղաքացիների կրած վնասները /օրինակ, Թեղուտի բնակիչներին/:
- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (ներկայումս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմում է) հանքավայրերի պաշարների հաստատման գործընթացում չի անցկացրել ընկերությունների ներկայացրած պաշարների գնահատման, դրանց արդյունահանման տնտեսական օգտակարության անկախ և իրատեսական փորձաքննություն և ուսումնասիրություն /Թեղուտ, Ամուլսար/:

թույլտվությունների մեջ չեն նշվել հիմնական ուղեկցող տարրերի առկայությունը /Թեղուտ, Ամուլսար /:

- Չեն ապահովվում և իրականացվում Օրհուսի կոնվենցիայով սահմանված իրավունքների պաշտպանությունը՝ տեղեկատվությունը ոչ միշտ է մատչելի լինում, չի ապահովվում որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցությունը /այն, որպես կանոն ձևական բնույթ է կրում/, արդարադատությունը նույնպես մատճելի չէ հանրության համար:
  - ՀՀ բնապահպանության նախարարությունն (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) ու բնապահպանական տեսչությունը չեն իրականացրել պարբերական մոնիտորինգ և պլանային ստուգումներ հանքավայրերում՝ չկատարելով իրենց պարտականությունները և անտեսելով հանրային ահազանգերը:
  - Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն թույլ է տվել խախտումներ հողերի չափագրման և հողերի կատեգորիաների սահմանման գործընթացում, արդյունքում խախտվել են գյուղացիների գույքային իրավունքները, ինչը հանգեցրել է խիստ անհամաչափ փոխհատուցման:
  - Հանքարդյունահանող ընկերությունների անօրինական գործունեության արդյունքում, պատճառվում է Հայաստանի Հանրապետությանը և քաղաքացիներին առանձնապես խոշոր չափերի տնտեսական և էկոլոգիական վնաս՝ հարյուրավոր հեկտարների հատված և չվերականգնված անտառներ, արտադրական վտանգավոր քիմիական նյութեր և միացություններ պարունակող հոսքաջրերով աղտոտված ջրային ռեսուրսներ, ծանր մետաղներով աղտոտված հողեր, մեծ ծավալ և մակերես ունեցող վթարային պոչամբարներ, գյուղատնտեսական նշանակությունը կորցրած՝ հանքարդյունահանման լցակայաններով պատված հարյուրավոր հեկտարներով հողատարածքներ, խախտված և չվերագանգնվող լանդշաֆտներ, ծանր հիվանդություններով տառապող հազարավոր քաղաքացիներ և սոցիալական լուրջ խնդիրներ: Սակայն, այս իրավիճակի համար ոչ պետական մարմինների, ոչ էլ ընկերությունների պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվում:

## **8. Դատարանի իրավական վերլուծությունը**

Լսելով դիմումատուի, տուժողների, վկաների և փորձագետի բացատրությունները, պատասխանողի ներկայացուցչների առարկությունները, հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանն եկավ հետևյալ եզրահանգման.

- ՀՀ բնապահպանության նախարարության (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից խախտվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջները: Մասնավորապես.

- Ընկերությունները չեն կատարում ազդեցության գնահատում մարդու առողջության վրա, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատվում է թերի: Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Ազդեցության գնահատման փուլում՝

1) գնահատվում է հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների և նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.

2) բացահայտվում են հիմնադրությամբ փաստաթղթի մոտեցումների և նախատեսվող գործունեության լուծումների այլընտրանքային տարբերակները և գնահատվում է դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի, **մարդու առողջության և սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա.**

3) կատարվում է նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակների էկոլոգատնտեսական վերլուծություն և նախընտրելի տարբերակի ընտրության հիմնավորում.

4) մշակվում են բնապահպանական միջոցառումներ, ներառյալ՝ ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխարգելելու, նվազեցնելու կամ բացառելու նպատակով.

5) **հաշվի են առնվում ազդեցության աստիճանը՝ հիմք ընդունելով ազդեցության ենթակա տարածքի աշխարհագրական դիրքը, բնակչության թիվը, ազդեցության հավանականությունը, բարդությունը, աստիճանը, տևողությունը, հաճախականությունը և տարբեր ազդեցությունների գումարային բնույթը.**

6) գնահատման ընթացքում հաշվի է առնվում նախատեսվող գործունեության տարածքում այլ գործունեությունների իրականացման հետևանքով **շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցությունը:**» Այդ գնահատումը բացակայում է նաև փորձաքննական եզրակացությունների մեջ:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

ՀՀ օրենքի 17-րդ հոդ. 4-րդ կետով սահմանված «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը» մինչ օրս չի հաստատվել ՀՀ կառավարության կողմից, արդյունքում հանքարդյունահանությամբ առաջացած վնասը չի գնահատվում և չի հատուցվում:

- Օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն. «7. Փորձաքննական եզրակացությունը կորցնում է ուժը, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվում փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:» Այս նորմը նույնպես չի կիրառվում ՀՀ բնապահպանության նախարարության (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) կողմից: Օրինակ, Թեղուտի հանքի փորձաքննական դրական եզրակացությունը տրվել է 2006թ.՝ 8 տարով /մինչև 2014թ./, այսինքն պետք է սկսեր գործունեությունը 2007թ., սակայն հանքարդյունահանումը սկսել է 2014թ. երբ փորձաքննական եզրակացության ուժը կորցրած է եղել և նոր օրենսդրություն է ընդունվել: Ամուլսարի հանքի վերջին փորձաքննական դրական եզրակացությունը տրվել է 2016թ.: Ընկերությունը մինչև 2017թ. պետք է սկսեր հանքարդյունահանությունը, սակայն մինչև օրս նույնիսկ շինարարական աշխատանքները չի ավարտել: Այս պարագայում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը չի զգուշացրել և ուժը կորցրած չի ճանաչել նշված

փորձաքննական եզրակացությունները, ինչը հնարավորություն է ստեղծում, որպեսզի ընկերությունները գործեն անօրինական դաշտում և պահանջներ ներկայացնեն Հայաստանի Հանրապետության դեմ:

Բացի այդ, ՀՀ բնապահպանության նախարարությունը (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) չի կիրառում Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ինչի համաձայն. «2. Փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) գործունեությունն իրականացվում է փորձաքննության ենթարկված նախագծային փաստաթղթերի և փորձաքննական եզրակացության պահանջների շեղումներով.

2) փորձաքննության ենթարկված նախագծային և հիմնադրությային փաստաթղթերում կատարվել են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փոփոխություններ՝ առանց լիազոր մարմնին այդ մասին տեղեկացնելու.

3) սույն հոդվածի 1-ին մասով ներկայացված պայմանները չեն կատարվել սահմանված ժամկետներում.

4) ընդունվել է բնապահպանական նոր օրենսդրություն.

5) փորձաքննական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ»:

Մասնավորապես, «Թեղուտ» ՓԲԸ-ն իր գործունեությունն իրականացրել է նոր նախագծով, ինչը փորձաքննություն չի անցել և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած չի ճանաչվել: Ամուլսարի ծրագրին՝ 2016թ. փորձաքննական դրական եզրակացություն տալուց հետո ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ, սակայն, ՀՀ բնապահպանության նախարարության (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն) կողմից փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած չի ճանաչվել, չնայած Ջերմուկի և Գնդեվազի բնակիչների դիմումի: Այժմ նշված գործը քննվում է ՀՀ Վարչական դատարանում:

- Օրենքի 26-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ հաստատված «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման» Կարգը չի նախատեսում հստակ մեխանիզմներ Օրհուսի կոնվենցիայի պահանջների լիարժեք կատարման համար և հանրային քննարկումները որպես կանոն կրում են ձևական բնույթ:

• Փորձաքննության ընթացքում գրեթե բոլոր դեպքերում անտեսվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի նորմերը: Մասնավորապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն արգելվում է ընդերքի օգտագործումը, եթե այդ տարածքներում կամ գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի աճելավայրեր կամ կենդանիների ապրելավայրեր, ինչպես նաև եթե այդ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիները: Այն հողերը, որոնց վրա առկա են պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ հողային օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն համարվում են պատմամշակութային հողեր և այդ հողերի վրա արգելվում է դրանց նպատակային ու գործառնական նշանակությանը հակասող ցանկացած գործունեություն:

- Ընդերքօգտագործողները չեն ապահովում ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները, և որևէ անձ դրա համար պատասխանատվության չի ենթարկվում և պատճառված վնասները չեն փոխհատուցվում:
  - ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (ներկայումս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կազմում է) և Ընդերքի տեսչությունը որպես կանոն չեն զգուշացրել և չեն դադարեցրել ընկերությունների ընդերք օգտագործման իրավունքը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:
  - Փորձաքննություն իրականացնող մարմինը որպես կանոն խախտում է նաև ՀՀ Ջրային օրենսգրքի մի շարք նորմեր: Այսպես, ՀՀ Ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ջրային ռեսուրսները ենթակա են պահպանության, և սահմանված են հատուկ պահանջներ դրանք պահպանելու համար: Մասնավորապես, ստորերկրյա ջրերի պահպանման գոտիներում արգելվում է պոչամբարների տեղադրումը, ռադիոակտիվ և թունավոր թափոնների արտանետումը, արտահոսքը, թաղումը, պայթեցման աշխատանքների իրականացումը, հետախուզական նպատակների համար ճնշումային հորատանցքերի պահպանումը: Բացի այդ, ՀՀ Ջրային օրենսգրքի 108-րդ հոդվածի համաձայն. «արգելվում է ջրային ռեսուրսների որակի վրա անուղղակի վնասակար ազդեցություն ունեցող թափոնների թաղման տեղամասերի, աղբանոցների, գերեզմանոցների և այլ օբյեկտների տեղադրումը»:
- ՀՀ Ջրային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ կեղտաջրերը ընդունելու համար արգելվում է օգտագործել այն ռեսուրսը, որը պարունակում է բնական բուժիչ ռեսուրսներ, գտնվում է առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների կազմում, առողջարանների հարևանությամբ, ինչպես նաև հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման, արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս:
- Փորձաքննական մարմինը՝ փորձաքննություն իրականացնելիս, հաշվի չի առնում նաև հանքավայրին բնակավայրերի մոտ գտնվելու հանգամանքը և տալիս է դրական եզրակացություն այն դեպքում, երբ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն արգելվում է բնակավայրերում հանքակույտերի, լցակույտերի տեղադրումը, մթնոլորտային օդը փոշով, վնասակար նյութերով աղտոտելու աղբյուր հանդիսացող այլ թափոնների պահեստավորումը:
  - Փորձաքննություն իրականացնող մարմինը, որպես կանոն, հաշվի չի առնում հանքավայրերի ազդեցության տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների առկայությունը: «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. «Կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց ապրելավայրերի անվտանգության, ինչպես նաև կենդանիների կենսագործունեության առանձնահատկությունների անխաթարությունն ապահովելու նպատակով նախատեսվող տնտեսական, շինարարական,

սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»: Իսկ նույն Օրենքի 18-րդ հոդվածում նշված է. **«Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը»:**

- Փորձաքննության ընթացքում հաշվի չեն առնվում նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների առկայությունը: Մինչդեռ, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «Բուսական աշխարհի օբյեկտների և դրանց աճելավայրերի անվտանգությունը, ինչպես նաև բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը, նախատեսվող տնտեսական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»: «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն. **«Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը»:**

Նշված օրենքներով պահպանվում են կենդանական աշխարհի և բուսական աշխարհի բոլոր օբյեկտները, այլ ոչ միայն ՀՀ Կարմիր գրքում գրանցվածները, այդ թվում նրանց ապրելավայրերը և աճելավայրերը, հետևաբար, բույսը կամ կենդանին այդ տեղից տեղափոխելով, խնդիրը չի լուծվում, քանի որ կենդանիների և բույսերի ապրելավայրերը և աճելավայրերը բաց հանքի պարագայում ոչնչանում են, հետևաբար, խախտվում են նշված օրենքների դրույթները:

Այս իրավական նորմերը շրջանցելու նպատակով, ՀՀ բնապահպանության նախարարության առաջարկով ՀՀ կառավարության 31.06.14թ. հ.781-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման» Կարգը, որի համաձայն ձեռնարկողը՝ Կարմիր գրքում գրանցված բույսերը պետք է տեղափոխի հատուկ պահպանվող տարածքներ կամ բուսական այգիներ, իսկ աճելավայրերի պահպանության մասին խոսք անգամ չկա: Այս որոշման դրույթներն ամբողջովին հակասում են ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթներին: Այժմ էլ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը համառորեն դիմադրում է՝ ՀՀ Վարչապետին ներկայացված՝ այդ որոշման ուժը կորցրած ճանաչելու առաջարկին:

- Փորձաքննության ընթացքում խախտվում է նաև ՀՀ անտառային օրենսգիրքը:

Մասնավորապես, Թեղուտի պղնձամոլիբդենային հանքի շահագործման համար տրվել է փորձաքննական դրական եզրակացություն՝ առանց հաշվի առնելու «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարծիքը և առանց վերջինիս համաձայնության, ինչպես նաև խոշոր չափի անտառահատում է իրականացվել «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից առանց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից հատատեղի հատկացման, առանց վերջինիս վերահսկողության:

Հանքարդյունահանող ընկերությունների կողմից խախտվում է, իսկ պետական լիազոր մարմինների կողմից չի վերահսկվում ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ին ընդունված «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման 8.1 կետի պահանջի կատարումը, որով օգտագործման տրամադրվող անտառային տարածքի դիմաց տնտեսվարողը պետք է առնվազն կրկնապատիկ անտառապատման աշխատանքներ իրականացնի:

- Հայաստանում ընդհանրապես չի իրականացվում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված սանիտարահիգիենիկ փորձաքննություն: Չի հաստատված սանիտարահիգիենիկ փորձաքննության անցկացման կարգը, չի ստեղծված փորձաքննություն իրականացնող մարմին: Մինչդեռ, այն պետք է կատարվի մինչև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և փորձաքննությունը:
- Ընկերությունների կողմից հաստատվում են ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող, պոչամբարի տեխնիկական անվտանգության վկայագրեր: Որպես կանոն, վկայագրերը չեն արտացոլում «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված՝ պոչամբարներում հնարավոր տեխնածին վթարների հավանականության, դրանց բնույթի ու մասշտաբների, աշխատողների, շրջակա բնակչության և միջավայրի վրա վտանգավոր գործոնների հնարավոր ազդեցության, դրանց կանխարգելման և վերացման համար նախատեսված միջոցառումները: Չի կատարվում անդրադարձ շրջակա միջավայրի պաշտպանվածությունն ապահովելու տեխնածին վթարների կամ արտադրական պատահարների բացահայտման մեխանիզմներին, նորմատիվ փաստաթղթերով սահմանված հնարավոր տեխնածին վթարների կամ արտադրական պատահարների հավանականության թույլատրելի քանակական ցուցանիշներին, վթարների զարգացման վերլուծություններին: Չեն գնահատվում Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սոցիալական, կոլեկտիվ, սպասվելիք վնասների ռիսկերը: Մասնավորապես.

դ) սոցիալական ռիսկ՝ բնորոշում է հնարավոր վթարի մասշտաբները և հասցվող վնասի չափերը,

ե) կոլեկտիվ ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով տուժվող մարդկանց քանակը,

զ) սպասվելիք վնասի ռիսկ՝ բնորոշում է վթարի հետևանքով առաջացող նյութական կորուստները:

Տեխնիկական անվտանգության փորձաքննություն և վերահսկողություն չի իրականացվում: Արդյունքում, պոչամբարները կառուցվում են տեխնիկական նորմերի խախտմամբ, դրանք հաճախ դառնում են վթարային՝ առաջացնելով տարածաշրջանում էկոլոգիական, սոցիալական և անվտանգության լուրջ խնդիրներ: Նման վթարային իրավիճակ է Թեղուտի, Թուխմանուկի, Նահատակի պոչամբարներում:



- ՀՀ կառավարության 10.03.15թ. N 244-Ն որոշմամբ անհիմն և անօրինական փոփոխություն է մտցվել ՀՀ Կառավարության 21.01.10թ. N 51-Ն որոշման մեջ և ավելացվել է բացահանքային ավտոմոբիլային ճանապարհների երկայնական թեքությունը մինչև 100%, ինչի արդյունքում ընկերությունները տնտեսում են հսկայական գումարներ, սակայն այդ ճանապարհները դառնում են վտանգավոր երթևեկելու համար:

Ելնելով վերը նշվածից, կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

### ՎՃՌԵՑ

1. Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերության իրականացման, հանքավայրի շահագործման թույլտվությունների տրամադրման, փորձաքննությունների իրականացման, վերահսկողության և գործարկման ընթացքում թույլ տրված օրինախախտումները, որոնք Հայաստանում և տարածաշրջանում հանգեցրել են բնապահպանական աղետի և սոցիալ-տնտեսական ճգնաժամի, խաթարել են ազգային անվտանգությունը, ճանաչել որպես բնության, մարդու և պետության դեմ ուղղված հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը, ՀՀ բնապահպանության, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ առողջապահության նախարարություններին, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեին, Պետական եկամուտների կոմիտեին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ դատական մարմիններին, ինչպես նաև հանքարդյունաբերական ընկերություններին:

3. Պատասխանատու ճանաչել նաև պետական մարմինների և ընկերությունների այն պաշտոնատար անձանց, ովքեր իրենց անգործությամբ, պաշտոնական դիրքի չարաշահմամբ, լիազորությունների գերազանցմամբ, անփույթ գործողություններով և անգործությամբ նպաստել են տարածաշրջանի էկոհամակարգային հավասարակշռության խախտմանը, ջրերի և հողերի աղտոտմանը, անտառների և լանդշաֆտի վերացմանը, մարդկանց իրավունքների խախտմանը, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի խախտմանը:

#### 4. Դիմել ՀՀ Դատախազություն՝ պահանջելով.

- Հարուցել քրեական գործեր Հայաստանի հանքավայրերի շահագործման անօրինական փորձաքննական եզրակացություններ ու թույլտվություններ տրամադրած պաշտոնատար անձանց նկատմամբ և վերականգնել նրանց

գործողությունների հետևանքով պետությանը և քաղաքացիներին պատճառած վնասները:

- Հարուցել քրեական գործեր՝ անօրինական հանքարդյունահանում իրականացնելու, ընդերքից ապօրինաբար, կամ նախագծային շեղումներով պաշարների արդյունահանման մեջ մեղավոր անձանց նկատմամբ և վերականգնել դրա արդյունքում պետությանը հասցված վնասները:
- Հարուցել քրեական գործեր հանքարդյունաբերական ընկերությունների ղեկավարների նկատմամբ, որոնք խուսափել են հարկերի, սոցիալական ապահովության վճարների և աշխատավարձերի վճարումից՝ վերականգնելով պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասը:
- Հարուցել քրեական գործեր ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք չեն վերահսկել հանքարդյունահանող ընկերությունների հարկային պարտավորությունների կատարումը և հայցերով դիմել են դատարան այդ ընկերությունները սնանկ ճանաչելու պահանջով:

## 5. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.

- Հռչակել Հայաստանը բարձր տեխնոլոգիաների, տուրիզմի և օրգանական գյուղատնտեսության երկիր՝ դադարելով հումքային երկիր լինելուց:
- Մշակել և հաստատել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն ու ռազմավարություն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի պահպանման, էկոլոգիական հավասարակշռության պահպանման, բնական պաշարների ռացիոնալ օգտագործման, մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական արդարության սկզբունքները:
- Հաստատել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդ. 4-րդ կետով սահմանված «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման» Կարգը:
- Մշակել նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում հետևյալ փոփոխությունները մտցնելու մասին.

ա/ Հայտի հետ ներկայացվում է.

- «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված սանիտարահիգիենիկ փորձաքննության դրական եզրակացությունը;

- Տեխնիկական փորձաքննության դրական եզրակացությունը:

բ/ Հանքի ուսումնասիրման, հետախուզման և հանքարդյունահանման պայմանագրեր կնքվում են միայն փորձաքննական դրական եզրակացության հիման վրա:

գ/ Հանքարդյունահանման թույլտվությունն այլ անձի փոխանցելու դեպքում անցկացվում է նոր փորձաքննություն:

դ/ Ազդակիր համայնքների ցանկը հաստատվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանով:

ե/ Փորձաքննական եզրակացությունը հաստատվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանով:

զ/ Փորձաքննական եզրակացությունը ուժը կորցրած է ճանաչվում, եթե այն կատարվել է ՀՀ օրենսդրության և միջազգային նորմերի խախտումներով /լրացնել գործող հոդվածը/

ը/ Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել, հաշվի առնելով հանրային մասնակցության վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի դիտողությունները, միաժամանակ ավելացնելով դրույթ այն մասին, որ եթե ազդակիր համայնքների բնակչության 10 տոկոսը դեմ է արտահայտվել ծրագրին՝ հանրային լսումների, հանրագրերի կամ հանրաքվեի միջոցով, ապա ծրագրին չի կարող տրվել փորձագիտական դրական եզրակացություն և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի N.1325 – Ն որոշման մեջ:

- Մշակել նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին՝ նախատեսելով վարչական պատասխանատվություն ոչ ճիշտ, ոչ լրիվ և ՀՀ օրենսդրության խախտմամբ փորձաքննություն կատարելու և սխալ փորձաքննական եզրակացություն տալու համար:
- Մշակել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագիծ՝ նախատեսելով քրեական պատասխանատվություն՝ ոչ ճիշտ, ոչ լրիվ և ՀՀ օրենսդրության խախտմամբ փորձաքննություն կատարելու և սխալ փորձաքննական եզրակացություն տալու համար, եթե դա առաջացրել է կամ կարող էր առաջացնել ծանր հետևանքներ:
- Մշակել և ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ՀՀ հողային օրենսգրքում հետևյալ փոփոխություն կատարելու մասին նախագիծ.  
ա/ արգելվում է գյուղատնտեսական, անտառային, առողջարանային, հատուկ նշանակության հողերի կատեգորիայի փոփոխությունը հանքարդյունաբերականի;  
բ/ հանքարդյունաբերական նպատակով հողերի կատեգորիայի փոփոխությունը իրականացվում է յուրաքանչյուր անգամ՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով;  
գ/ արգելվում է հանքարդյունաբերական նպատակով տրամադրվող հողերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելը:
- Մշակել նախագիծ և ներկայացնել ՀՀ Ազգային ժողով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին: Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 16-րդ հոդ. 3-րդ մասը, նախատեսելով հնարավորություն բոլոր բնապահպանական կազմակերպություններին դիմելու դատարան առանց սահմանափակումների՝ Օրհուսի կոնվենցիայի համապատասխան:
- Արգելել հանքավայրերի նոր ուսումնասիրման, հետախուզման և հանքարդյունահանման թույլտվությունների տրամադրումը մինչև ՀՀ

հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ու ռազմավարության, նոր օրենքների և օրենսդրական համապատասխան փոփոխությունների ընդունումը:

- Սահմանել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները:
- Սահմանել նվազագույնը 20 տարվա անվտանգ հանքարդյունահանության փորձի առկայության պարտադիր պայման հանքարդյունահանման թույլտվություն ստանալու համար:
- Սահմանել պարտադիր երաշխիքային դրամագլխի վճար /օրինակ, 50 մլն դոլար/, ինչը պետք է վճարվի մինչև հանքարդյունահանության սկիզբը՝ հաշվի առնելով՝ ընկերության գործունեության դադարումից հետո 50 տարվա ընթացքում հնարավոր ռիսկերի, վթարների, և աղետների կանխարգելման և վերացման համար անհրաժեշտ ծախսերը:
- Սահմանել լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչները:
- Ուժը կորցրած ճանաչել հանքարդյունահանող ընկերություններին ապրանքների ներմուծման արտոնությունների տրամադրման մասին ՀՀ կառավարության որոշումները, չտրամադրել նոր արտոնություններ:
- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 10.03.15թ. N 244-Ն որոշումը, որով փոփոխություն է մտցվել ՀՀ Կառավարության 21.01.10թ. N 51-Ն որոշման մեջ և ավելացվել է բացահանքային ավտոմոբիլային ճանապարհների երկայնական թեքությունը, մինչև 100%:
- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Կառավարության 31.06.14թ. հ.781-Ն որոշումը, որով հաստատել է «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման» Կարգը, որի դրույթները ամբողջովին հակասում են ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների դրույթներին:

## **Հանձնարարել.**

### **ՀՀ կառավարության Բնապահպանության և ընդերքի տեսչությանը.**

- Իրականացնել համալիր ստուգումներ հանքարդյունաբերական ընկերություններում և հրապարակել ստուգման արդյունքները:
- Արգելել այն ընկերությունների գործունեությունը, որոնք փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո 1 տարվա ընթացքում գործունեություն չեն սկսել /հիմք՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդ. 7-րդ մաս/:
- Պատասխանատվության ենթարկել բնապահպանական խախտումներ թույլ տված պատասխանատու պաշտոնատար անձանց:

### **ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը.**

- Մշակել և հաստատել կենսաբազմազանության վրա հանքարդյունաբերության հետևանքների ազդեցության գնահատման ուղեցույցներ և մեթոդաբանություններ:
- Ուժը կորցրած ճանաչել փորձաքննական եզրակացությունները, եթե նախատեսվող գործունեության իրականացումը չի սկսվել փորձաքննական եզրակացության տրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում /հիմք՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդ. 7-րդ մաս/:
- Ուժը կորցրած ճանաչել փորձաքննական եզրակացությունները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդ. սահմանված դեպքերում:
- Իրականացնել մշտադիտարկումներ օդի, ջրի, հողի վիճակի նկատմամբ պոչանքային տնտեսություններից արտահոսքերի հետևանքով ջրերի որակի և ռեժիմի փոփոխության, դրենաժային ջրերի առաջացման, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի նկատմամբ՝ դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով:
- Փորձաքննություն իրականացնելիս՝ հաշվի առնել նաև տվյալ տարածքի վրա այլ աղտոտիչների առկայությունը և գումարային գնահատում իրականացնել:

### **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը**

- Վերահսկողություն իրականացնել հանքավայրերի պոչամբարների անվտանգության ապահովման նպատակով:
- Տեխնիկական փորձաքննություն իրականացնելիս՝ հաշվի առնել նաև տվյալ տարածքում առկա այլ աղտոտիչների առկայությունը և գումարային գնահատում իրականացնել, ինչպես նաև գնահատել տվյալ գործունեության ընթացքում այլ օբյեկտների /թունեւելների, պատվարների, պատնեշների, այլ/ վրա ազդեցությունը:

### **ՀՀ Առողջապահության նախարարությանը.**

- Մշակել և հաստատել մարդու առողջության վրա հանքարդյունաբերության հետևանքների ազդեցության գնահատման ուղեցույց և մեթոդաբանություն:
- Ստեղծել Սանիտարահամաճարակային փորձաքննություն իրականացնող մարմին:
- Մշակել և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը «Սանիտարահամաճարակային փորձաքննության իրականացման» Կարգը:
- Իրականացնել՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված, բոլոր հանքերի սանիտարահիգիենիկ փորձաքննություն:

- Իրականացնել հանքավայրերի ազդակիր համայնքներում մարդկանց առողջության մոնիտորինգ:
- Հիմք ընդունել միջազգային և տեղական մասնագիտական հետազոտական ինստիտուտների կողմից կատարված հետազոտությունները՝ հանքավայրերին հարող համայնքների և տարածքների հողերի, ջրերի և կենսանյութերի վերաբերյալ և կիրառել անհրաժեշտ միջոցառումներ տեղական բնակչության առողջապահության ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
- Ուսումնասիրություններ կատարել հանքավայրերի շրջակա համայնքներում՝ մարդու առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության վերաբերյալ և արդյունքները հրապարակել:
- Միջոցներ ձեռնարկել՝ հանքավայրերի բացասական ազդեցությունը մարդու առողջության վրա կանխելու և մարդկանց առողջության պաշտպանությունը ապահովելու նպատակով:

### **Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը**

- Դադարեցնել ընդերքօգտագործման և երկրաբանական ուսումնասիրությունների համար արտոնագրերի տրամադրումը մինչև ազդակիր համայնքների զարգացման ծրագրերում ընդգրկված չլինեն, հանքարդյունաբերության վտանգները չեզոքացնող միջոցառումների ծրագրեր և այդ միջոցառումների իրականացման համար ծրագրերում նախատեսված չլինեն համապատասխան ֆինանսական միջոցներ:

### **ՀՀ պետական եկամուտների կոմիտեին**

- Ստուգումներ իրականացնել հանքարդյունաբերական ընկերություններում՝ հարկերի վճարման ճշտությունը, արդյունահանվող և արտահանվող հանքանյութի ծավալների համապատասխանությունը ստուգելու նպատակով:
- Ստուգումներ իրականացնել սնանկ ճանաչված հանքարդյունաբերական ընկերություններում՝ պարզելու հարկային պարտքի գոյացման պատճառները:
- Պատասխանատվության ենթարկել հարկային օրենսդրությունը խախտող ընկերություններին և դրանց ցանկը հրապարակել:

### **6. Դիմել ՀՀ Անվտանգության խորհրդին՝ խնդրելով.**

ա/ Գնահատական տալ վճռում ներկայացրած փաստերին՝ թե որքանով են դրանք ազդում երկրի էկոլոգիական անվտանգության վրա:

բ/ Էկոլոգիական անվտանգության հետ կապված հանքարդյունաբերության ոլորտի առկա վտանգների վերաբերյալ կազմակերպել մասնագիտական քննարկումներ և ՀՀ կառավարությանը ներկայացնել առաջարկությունների փաթեթ:

## 7. Պարտավորեցնել հանքարդյունաբերական ընկերություններին.

- Պահպանել ՀՀ օրենսդրությունը և միջազգային նորմերը
- Վերականգնել խախտված տարածքները,
- Տնկել հատված անտառի կրկնապատիկը և պատշաճ խնամք ապահովել՝ փոխադրելով անտառի շարք
- Իրականացնել պոչամբարների անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Փոխհատուցում վճարել բնակիչներին պատճառված վնասների դիմաց
- Բացառել արտադրական և հանքային արտահոսքերը մակերևութային և ստորգետնյա ջրահավաք ավազան, հողերի աղտոտումը ծանր մետաղներով
- Պահպանել ջրի շրջանառու փակ համակարգի ռեժիմը
- Մտցնել ապահովագրական համակարգ ազդակիր համայնքներում բնակիչների առողջության, շրջակա միջավայրի և գյուղմթերքի աղտոտման ռիսկերի վերաբերյալ:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

### Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Կ. Դանիելյան

Զ.Հովհաննիսյան

Ի.Զարաֆյան